23 ՅՈՒՆՈՒԱՐ 2001 ԵՐԵՔՇԱԲԹԻ 11 (2215)

Azg

Azg armenian daily

Ըստ թուրքերի, Լոնդոնը եւս պատրաստվում է ընդունելու հայերի ցեղասպանությունը

ԵՎԵՎԱՆ, 22 ՅՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքական «Ջումհուրիեթի» դիտարկումներով, Լոնդոնը պատրաստվում է հետեւել Փարիզին եւ ընդունել հայերի ցեղասպանությունը: Թերեւ այս եզրահանգման է եկել Լոնդոնում լույս տեսնող «Observer»-ի մի հրապարակման առիթով:

Հունվարի 27-ին Մեծ Բրիտանիայում նշվելու է Հոլոքոստի հիշատակի օրը, որին մասնակցելու է վարչապետ Տոնի Բլերը եւ արքայազն Չարլզը: «Ջումհուրիեթը»-ը նշում է, որ բրիտանական մամուլը ներառնելով հայերի ցեղասպանությունը Հոլոքոստի հիշատակի օրվա շրջանակի մեջ, փաստորեն ընդունում է, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը պատրաստվում է ճանաչել հայերի ցեղասպանությունը:

«Observer»-ը օգտագործում է այնպիսի ձեւակերպումներ, կարծես հայերի ցեղասպանությունը արդեն ընդունված փաստ է՝ դժգոհում է «Ջումհուրիեթը»: Ըստ «Observer»-ի, բրիտանական կառավարությունը չպետք է անտարբեր մնա հայերի այն հայցադիմումների հանդեպ, թե Մեծ Բրիտանիայի կառավարությունը անտեսում է պատմական իրողությունը՝ խուսափելով Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումից:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Քոչարյանն ու Ալիեւը կհանդիպեն Փարիզում

Սերգեյ Իվանովը հունվարի 21-ին կրկին այցելեց Երեւան եւ Բաքու

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Հեյդար Ալիեւը ԼՂ հակամարտության շուրջ բանակցելու պատեհ առիթը բաց չեն թողնում. հունվարի 26-ին Փարիզում նախատեսված է Քոչարյան-Ալիեւ հերթական 13-րդ հանդիպումը: Մամուլում հնչող ենթադրությունները, թե փարիզյան հանդիպումը նախորդներից արդյունավետ կլինի, լոկ ենթադրություններ են: Արդյունավետության մասին կարող ենք փաստել, եթե տեղյակ լինենք՝ ի՞նչ է քննարկվել Քոչարյան-Ալիեւ նախորդ հանդիպման ժամանակ:

Մեր կարծիքով, փարիզյան հանդիպումը հետաքրքիր է մի շարք պատճառներով: Նախ՝ կլինի երրորդ հազարամյակում առաջինը, ապա՝ առաջինը Հայաստանի եւ Ադրբեջանի պատասխանատու Եվրախորհուրդ (ԵԽ) ընդունվելուց հետո: Հունվարի 25-ի առավոտյան Ստրասբուրգում տեղակայված ԵԽ շենքի դիմաց կբարձրացվեն Հայաստանի եւ Ադրբեջանի պետական դրոշները: Սակայն ամենաուշագրավը Քոչարյան-Ալիեւ հանդիպման վայրն է՝ հովանավորությամբ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի: Ինչպես հայտնի է Ադրբեջանում, Ֆրանսիայի Ազգային ժողովը հունվարի 18-ին պաշտոնապես ճանաչեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Պաշտոնական Անկարան փնտրտուքների մեջ է՝ ինչպես եւ ինչպիսի հակահարված տալ Ֆրանսիային: Ահա իրադարձությունների նման համատեքստում Թուրքիայի կրտսեր «եղբայր» եւ արյունակից Ադրբեջանը, ի դեմս նախագահ Հ. Ալիեւի, համաձայնում է ԼՂ հարցը Ռ. Քոչարյանի հետ քննարկել հենց Փարիզում:

Տես էջ 3

ԹՈՒՐՔԻԱ

Հակաֆրանսիական հիստերիան չի կարող հակազդեցության միջոց լինել

Ֆրանսերեն լեզվի ուսուցումից հրաժարվելն ու ֆրանսիական թեֆումով դպրոցները փակելն առավել եւս

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՅԱՆ

Շարունակվում են Ֆրանսիայի Ազգային ժողովում 1915 թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչելու օրինագծի ընդունման արձագանքները Թուրքիայում: Արձագանքի հարցում հակազդեցության դրսեւորումով թուրքական հեռուստատեսությանն ու մամուլին են միանում քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես նաեւ գործարար շրջանակները: Այսպիսով, հակաֆրանսիական հիստերիայի ծավալումը երկրում անխուսափելի է դառնում: Ստեղծված իրավիճակում թուրքական հասարակությունն ակամա հանգում է Ֆրանսիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու եւ Ֆրանսիական ապրանքները բոյկոտելու կարծիքին:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առումով կարեւորն, անշուշտ, վերոհիշյալ արձագանքները չեն, այլ հակազդեցության թուրքական

ՌՈՒՍՏԱՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

հեռուստատեսությանն ու մամուլին են միանում քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, ինչպես նաեւ գործարար շրջանակները: Այսպիսով, հակաֆրանսիական հիստերիայի ծավալումը երկրում անխուսափելի է դառնում: Ստեղծված իրավիճակում թուրքական հասարակությունն ակամա հանգում իշխանությունների հնարավորությունները: Դրանք, ըստ երեւույթին, խիստ սահմանափակ են, որ Թուրքիայում կառավարության մաս կազմող կուսակցությունները հակազդեցության հարցում ընդհանուր հայտարարի չեն գալիս: Ինչ վերաբերում է հակաֆրանսիական հիստերիային, որը նրանք համատեղ ուժերով հրահրել են երկրում, հազիվ թե հակազդելու արդյունավետ միջոց լինի:

Տես էջ 3

Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովը այսօր կսկսի աշխատանքը

ԵՐԵՎԱՆ, 22 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 23-ին Երեւանում իր աշխատանքները կսկսի հայ-իրանական կարգերի կոորդինացման կառավարական հանձնաժողովը: Իրանի Իսլամական Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար դոկտոր Հոսեյն Նամազիի գլխավորած պատվիրակության կազմում ընդգրկված են միջազգային հարցերով ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Իրանի տեխնիկական եւ էկոնոմիկայի օժանդակության ու ներդրումների կազմակերպության ղեկավար Փարվիզ Դավուդին, ԱՊՀ երկրների առաջին վարչության պետ Պոլամոեզա Հադադին, հարկերի, ասոցիացիաների եւ միջազգային հաստատությունների գլխավոր տնօրեն, նախնական պատվիրակության ղեկավար Աբդոլալի Ամիդին, Արեւելյան Ասրպատականի նահանգապետ եահյա Մոհամմադզադեն եւ իսլամական խորհրդարանի անդամ Ալի Ամբար Ջաֆարին: Աշխատանքներին իրանական կողմից կմասնակցի ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնին:

Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության հասարակայնության հետ հարաբերությունների վարչության տեղեկատվության, հանձնաժողովի լիագումար նիստը տեղի կունենա հունվարի 24-ին: Հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում կքննարկվեն Իրան-Հայաստան գազատարին, Արաքսի գետի վրա համատեղ հիդրոէլեկտրակայանի կառուցմանը, Քաջարանի թունելի շինարարությանը, հայկական բեռնատար մեքենաների Իրանի տարածքով անարգել երթեւեկությանը, Երեւանի մոտակայքում իրանական մեքենաների համար բեռնահամալիրի ստեղծմանն առնչվող խնդիրներ:

Կքննարկվեն նաեւ գիտության եւ կրթության, մասնային ոլորտի եւ առեւտրատնտեսական բնույթի մի շարք այլ հարցեր:

Հեռուստառադիոյի խորհուրդը Ռ. Քոչարյանի մոտ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հունվարի 20-ին հանդիպում է ունեցել հանրային հեռուստառադիոյի նորանշանակ խորհրդի անդամների հետ:

Հանրապետության նախագահը շնորհավորել է նրանց եւ ընդգծել, որ հանրային հեռուստառադիոն լորտն այլեւս օրենսդրորեն պաշտպանված է, եւ ինքն անձամբ ըստ ամենայնի կնպաստի խորհրդի՝ որպես իշխանության բոլոր ճյուղերից անկախ գործող մարմնի կայացմանը:

Արձանագրելով վերջին տարիներին Ազգային հեռուստատեսության որակական աճը, որ բերել է դրա վարկանիշի իրական բարձրացման, Ռոբերտ Քոչարյանը հույս է հայտնել, որ դրական միտումները կպահպանվեն: Նա հաջողություններ է մաղթել խորհրդի անդամներին իրենց գործունեության նոր ոլորտում:

Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը նախազգուշացրել է Ֆրանսիային

ԱՆԿԱՐԱ, 22 ՅՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի խորհրդարանի կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունումը լուրջ վնաս կհասցնի Անկարայի հետ Փարիզի հարաբերություններին եւ բացասաբար կանդրադառնա տարածաշրջանի կայունության վրա: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության հաղորդման, այս հայտարարությամբ այսօր հանդես է եկել Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը:

Վրաստանն ունի 1,49 մլրդ դոլար արտաքին պարտք

Այդ թվում՝ Հայաստանին

2000 թ. հոկտեմբերի տվյալներով, ինչպես հաղորդում է «Փրայմ նյուզ» գործակալությունը, Վրաստանի արտաքին պարտքը կազմում է 1,49 մլրդ ամերիկյան դոլար: Ամենախոշոր պարտատերը Թուրքմենստանն է՝ 342,8 մլն, ապա գալիս են Համաշխարհային բանկը (339,1 մլն), Միջազգային արժութային հիմնադրամը (283 մլն), Ռուսաստանը (179,2 մլն), Եվրամիությունը (88,5 մլն), Ավստրիան (69,5 մլն), Թուրքիան (54,3 մլն), Գերմանիան (40,2 մլն), ԱՄՆ-ը (39,6 մլն), Եվրոբանկը (39,6 մլն): Վրաստանը էլեկտրաէներգիայի դիմաց շուրջ 4 մլն դոլար պարտք ունի Հայաստանին: Հետաքրքիր է, խավար Վրաստանը Հայաստանից գնած էժան էլեկտրաէներգիան ավելի թանկ գնով վաճառում է Թուրքիային: Մեզ համար ավելի հետաքրքիր կլիներ, եթե Վրաստանը վճարեր Հայաստանի պարտքը:

«Չեչնիայում գործողության ռազմական մասն ավարտված է»

ՄՈՍԿՎԱ, 22 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Չեչնիայում հակահաբեկչական գործողության ռազմական մասն այս պահին կարելի է համարել գործնականորեն ավարտված: Այս մասին հունվարի 22-ին Մոսկվայում մամլո ասուլիսում հայտարարել է Ռուսաստանի նախագահի օգնական Սերգեյ Յաստրժեմբսկին: Հիմնական խնդիրը Չեչնիայում այսօրվա դրությամբ գրոհայինների անջատանջատ մաքր խմբերի ոչնչացումն է, ինչպես նաեւ բանդիտական կազմավորումների պարագլուխների հետախուզումը, նշել է Յաստրժեմբսկին: Միեւնույն ժամանակ Ռուսաստանի ԱԳՆ Աջակցության վարչության պետ Ալեքսանդր Զդանովիչը ճեպասուլիսում հայտարարել է, որ դեռ վաղ է խոսել Չեչնիայում ռազմական ներկայության կրճատման ծավալների եւ ժամկետների մասին: Բոլոր այդ հարցերը ենթակա են որոշակի լրամշակման, ընդգծել է Զդանովիչը՝ նշելով, որ առայժմ «սոսկ ընդունված է համապատասխան որոշում»:

ԵՐԵՎԱՆ

ԱԱՀ կիրառումից թանկացել են նաեւ մանկական կերերը

ԵՐԵՎԱՆ, 22 ՅՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 1-ից ԱԱՀ կիրառման արդյունքում դեղորայքի թանկացման հետ միաժամանակ 15-20%-ով բարձրացել են նաեւ մանկական կերերի գները: «Արաքիր» մանկական պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ Արեգ Նարգիզյանը նշեց, որ չնայած բնական կերակրման առավելությանը, այսօր արհեստական կերերով սնվում է մանուկների ավելի քան 40%-ը: Երբեմն կերակրման այս տարբերակին մայրերը հարկադրված են դիմում: Սոցիալական ներկա պայմաններում մանկական կերերի գների բարձրացումը ոչ միայն բացասաբար կազդի առանց այն էլ տերեցտարի նվազող ծնելիության վրա, այլեւ, մասնագետների համոզմամբ, կհայտնվենք հարեւան երկրներից մանկական կերերի ճամբարուկային առեւտրի ծաղկման եւ շուկայի անվերահսկելիության խնդրի առաջ:

Ըստ որոշ դիտարկումների, մանկական կերերի ներկրմամբ ներկայումս Հայաստանում զբաղվում են երեք կազմակերպություն. ներքին շուկայի 70%-ը բաժին է ընկնում զվեյցարական «Նեսլե» ֆիրմայի հայաստանյան ներկայացուցիչ «Հայր եւ որդի երիցյաններ» ընկերությանը, իսկ 30%-ն ապահովում են հայկական «Հիս» եւ ռուսական մեկ այլ կազմակերպություն: Անցյալ տարի, վիճակագրական տվյալների համաձայն, Հայաստան է ներկրվել շուրջ 200 տոննա մանկական կեր: Ըստ ներկրողների, սահմանի վրա ԱԱՀ-ի վճարման դեպքում, գների բարձրացումից բացի, կիսով չափ կպակասեն ներկրման ծավալները: Իսկ արդեն ներկրված կերերի դեպքում այդ հարկը վճարվում է իրացումից՝ 20%-ով բարձրացնելով դրանց գինը:

ԱԶԳ

ՊԱՏԱՍԽԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Բյուջեն ընդունվեց որոշ թերընթռռումներով

ԼՂՀ խորհրդարանն ընդունեց 2001 թ. պետբյուջեն: Մինչ այդ, կառավարության անդամների մասնակցությամբ այն քննարկվել էր ԱԺ խմբակցություններում ու հանձնաժողովներում եւ արդեն լրամշակված տեսքով հավանության արժանացել: Խորհրդարանի արտահերթ լիագումար նիստում եւս բյուջեի քննարկումը կարծես թե լուրջ ընդդիմախոսության չենթարկվեց: ՀՅԴ խմբակցության որոշ անդամ պատգամավորներ խանգարեցին երկրի առաջ: Նա ցավով նշեց, որ որոշ պատգամավորներ չեն կարողացել համընդգրկուն ընթռռել նոր տարվա բյուջեի ամբողջական պատկերը:

Հիմնական դժգոհությունը սոցիալական հատկացումների վերաբերյալ էր: Ասենք, որ այս ոլորտի համար հատկացումները բյուջեի ծախսային մասում կազմում են 66,8 տոկոս: Մասնավորապես, այդ առնչությամբ վարչապետը նշեց, որ 450 միլիոնը: Այս տարվա միջոցեսական վարկից եւս նույնքան կրճատվել է ընդհանուր առմամբ կազմելով 1,5 մլրդ դրամ: Նման չափերի գումարի կրճատումը, ըստ վարչապետի, չէր կարող հետեւանքներ չունենալ: Ստիպված եղան նոր բյուջեն կազմել գրեթե 13 տոկոսով կրճատված: Ինչ մնում է բյուջեի դեֆիցիտին, ապա կազմում է 3,7 տոկոս, որը ոչնչով չի կարող ազդել պետության նորմալ ֆինանսական գործունեության վրա:

Վարչապետ Ա. Դանիելյանի ելույթի պարզաբանումները՝ ի հավելումն ֆինանսների նախարար Ս. Թեւոսյանի զեկուցման, թերեւս բխում էին պատգամավորներից ոմանց՝ բյուջեի կառակցությամբ ունեցած թերընթռռումները վերացնելու անհրաժեշտությունից, որը, կարծում ենք, կառավարության նախագահին հաջողվեց:

Այսպիսով, ԼՂՀ այս տարվա պետբյուջեն, իր 4744,6 միլիոն դրամ եկամտային, 14308,1 մլն դրամ ծախսային եւ 9563,5 մլն դրամ դեֆիցիտային մասերով ընդունված է: Մնում է իրագործել արտացայտությամբ եւ պատասխանատվությամբ:

ԵՂԻՇԵ ԱԲԱՍՅԱՆ
Ստեփանակերտ

Բյուջեի քվեարկությունից առավել հաղթական հարց չկա

ԼՂՀ Ազգային ժողովը հունվարի 19-ի նիստում ձայների 24 «կողմ» 9 «դեմ» հարաբերակցությամբ հաստատեց 2001 թ. բյուջեն:

ԼՂ վարչապետ Անուշավան Դանիելյանի հավաստմամբ 2000 թ. հանրապետությունում արձանագրվել է 7 տոկոս տնտեսական աճ: Ազգային ժողովի՝ 2001 թ. բյուջեին «դեմ» քվեարկած բոլոր ինը պատգամավորները ներկայացնում են ՀՅԴ-ն: ԼՂՀ ԱԺ ներքին գործերի, պաշտպանության եւ ազգային անվտանգության հանձնաժողովի նախագահ, ՀՅԴ խմբակցության անդամ Արթուր Մոսիյանը «Ազգի» հետ հեռախոսազրույցում նշեց, որ խմբակցության միասնական քվեարկությունը քաղաքական ենթատեքստ չունի. «Մեր առաջարկությունները մասամբ են ընդունվել, այդ պատճառով դեմ քվեարկեցինք»: Պրն. Մոսիյանը ԼՂՀ վարչապետի ներկայացրած 7 տոկոս տնտեսական աճին խիստ կասկածանքով է վերաբերվում:

Կարելի է փաստել, որ ԼՂՀ իշխանությունների եւ ՀՅԴ-ի միջեւ հակասությունները ակնհայտ են: Բյուջեի քվեարկությունը ամենաքաղաքական հարցն է, եւ աննորմալ կլիներ «դեմ» քվեարկել, միեւնույն ժամանակ սատարել իշխանություններին: Այսուհանդերձ, ՀՅԴ կեցվածքը լիովին տեղավորվում է ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանի հռչակած ժողովրդավարական պետության կառուցելու ընթացքում, այլապես, չհանդուրժելով ընդդիմության գոյությանը, Ղուկասյանին կմնար հրաժարվել իր մոտ աշխատող մի քանի դաշնակցական-խորհրդականներից:

Ռ. Հ.

Տիգրան Զանոյանը հիշ արդյունավետ է համարում փաստաբանների որակավորման քննությունները

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, հունվարի 20-ին Հայաստանում կայացան փաստաբանների որակավորման քննություններ: Քննություններին մասնակցելու հայտ են ներկայացրել 205 դիմորդներ:

Փաստաբանների որակավորման քննությունները կազմակերպում եւ անցկացնում է պետական քննական հանձնաժողովը, որի երեք անդամները փաստաբաններ են, երեքը՝ դասավորներ եւ մեկը՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ: Հանձնաժողովի նախագահն է Հայ փաստաբանների միջազգային միության նախագահ Տիգրան Տեր-Եսայանը:

Քննությունները ընթանում են թե բերանացի եւ թե գրավոր իրավունքի գծով, ըստ դիմորդների նախասիրության: Դիմորդներին բաժանվում են տարբեր գործեր, որոնց հիման վրա փաստաբանի որակավորման հայցվորները պետք է կազմեն վերջնական բողոքներ: Քննության ավարտից հետո հանձնաժողովը կոդավորում է աշխատանքները եւ հանձնում ստուգող մարմնին, որի կազմն առայժմ գաղտնի է պահվում: Դրական գնահատական ստացած հայցվորները իրավունք են ստանում դառնալ Հայաստանում գործող երեք փաստաբանական միություններից մեկի անդամ եւ ձեռք բերել Հայաստանում փաստաբանական գործունեությամբ զբաղվելու անժամկետ արտոնագիր:

Քննական հանձնաժողովի անդամ, փաստաբան Տիգրան Զանոյանը նշեց, որ քննությունների արդյունավետությունը ցածր է համարում, «քանի որ նախորդ տարիների փորձը ցույց է տալիս, որ քննությունների անցողիկ գնահատականներով որակավորում են ստանում մարդիկ, որոնք չեն համապատասխանում այսօրվա պահանջներին, ինչը դրսեւորում է նրանց հետագա գործունեության մեջ»:

ԴԱՏԱԿԱՆ

«Հոկտեմբերի 27-ի» գործով դատական ծանուցագիր չի ուղարկվել

«Հոկտեմբերի 27»-ի քրեական գործով մասնակից փաստաբանները չեն հաստատում մամուլում հրապարակված այն լուրը, որ սույն գործով դատաքննությունը սկսվելու է հունվարի 30-ին: Փաստաբանները զերծ են մնում դատաքննության համար ծգգրիտ օր հիշատակելուց, քանի դեռ դատական ծանուցագիր չեն ստացել: Նրանք «Հոկտեմբերի 27-ի» գործի դատաքննությունը հավանական են համարում փետրվարի առաջին տասնօրյակում:

Դատապաշտպանը բողոքարկում է Ա. Տեր-Սահակյանի մահապատիժը

Վերաքննիչ դատարանի քրեական գործերի պալատը օրերս կայացրած դատավճռով անփոփոխ թողեց բանդայի պարագլուխ համարվող Արմեն Տեր-Սահակյանի դատավճիռը: Նրա դատապաշտպան Անժելա Կարապետյանը դատավճիռը բողոքարկել է վճռաբեկ դատարանում՝ համաձայն չլինելով իր պաշտպանյալին բանդայի պարագլուխ ներկայացնելուն, որի համար նրան դատապարտեցին ծանրագույն պատժի. «Մահապատիժն անհամատեղելի է Ա. Տեր-Սահակյանի կատարած հանցանքին», համոզված պնդում է փաստաբանը:

Դատավոր Խաչատրյանը ծանոթանում է Բլեյանի գործի նյութերին

ԵՐԵՎԱՆ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախկին տնօրեն Ատոմ Բլեյանի եւ կրթահամալիրի նախկին գլխավոր հաշվապահ Ռիմա Պողոսյանի քրեական գործի դատաքննությունը վերաքննիչ դատարանում կնախագահի դատավոր Արշակ Խաչատրյանը: Դատարանում Արմենպրեսի թղթակցին հայտնեցին, որ Ար. Խաչատրյանը ծանոթանում է գործի 40 հատոր նյութերին: Դեռեւս հայտնի չեն մյուս երկու դատավորների անունները (վերաքննիչ դատարանի նիստերն անցկացվում են երեք դատավորների մասնակցությամբ): Հիշեցնենք, որ մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից դեկտեմբերի 15-ի դատավճռով Ա.Բլեյանը դատապարտվել է 7, Ռ. Պողոսյանը՝ 6 տարվա ազատազրկման:

Ա. Հովհաննիսյանի բողոքը թողնվեց առանց քննության

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը հունվարի 22-ին պետք է լսեր **«Ազգի»** ընթերցողներին քաջածանոթ Անուշ Հովհաննիսյանի հերթական բողոքը՝ 6000 ԱՄՆ դոլար բռնագանձել Գերմանիայի քաղաքացի Ժիրայր Քոչարյանից: Հիշեցնենք, որ վճռաբեկ դատարանի որոշումով, Ա. Հովհաննիսյանը պետք է Ժ. Քոչարյանին վերադարձներ 6000 ԱՄՆ դոլար: Հայցվոր Ա. Հովհաննիսյանը մերժվելով առաջին ատյանում, վճիռը բողոքարկել էր վերաքննիչ դատարանում, սակայն երկու անգամ չներկայացավ դատական նիստին: Դատարանը երեկ որոշեց բողոքը թողնել առանց քննության:

Արկադի Վարդանյանը մասնագիտական բժշկական օգնության կարիք ունի

Պնդում է նրա կինը

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՀՀ ազգային անվտանգության նախարարության մեկուսարանում գտնվող «21-րդ դար» միջազգային անկախ ասոցիացիայի նախագահ Արկադի Վարդանյանը առողջական վիճակի վատթարացման պատճառով մասնագիտական բժշկական օգնության կարիք ունի: Ինչպես հունվարի 22-ին տեղեկացրեց Ա. Վարդանյանի կինը՝ Ելենա Վարդանյանը, իր ամուսնու զարկերակային ճնշումն արդեն 5-րդ օրն է գտնվում է կրիտիկական մակարդակի վրա, իսկ ըստ նույն օրն անցկացված բժշկական զննման արդյունքների՝ հավասար է 220/150-ի:

Ըստ տիկին Վարդանյանի, Արկադի Վարդանյանը չի համաձայնել տեղափոխվել բանտային հիվանդանոց՝ այն պատճառաբանությամբ, որ այնտեղ բացակայում են համապատասխան մասնագետներ եւ դեղորայք: Բացի այդ, նա հրաժարվում է ընդունել արյան ճնշումն իջեցնող ուժեղ դեղամիջոցներ, քանի դեռ հիվանդության ախտորոշում չի կատարվել եւ ճնշման բարձրացման պատճառները չեն հայտնաբերվել:

Ելենա Վարդանյանը տեղեկացրեց, որ նույն օրն ինքը նամակ է հղել ՀՀ նախագահին, որում խնդրում է իր ամուսնուն տեղափոխել մասնագիտացված բժշկական հաստատություն՝ Երեւանի Արտաքնական ինստիտուտ: Նույն խնդրանքով տիկին Վարդանյանը դիմել է Ազգ սոցիալական, առողջապահության եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովին: Այդ, ինչպես նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին ավելի վաղ հաստատագրված դիմումներն առայժմ մնում են անպատասխան:

Թեեւ Արկադի Վարդանյանը ռուսահպատակ է, Հայաստանում Ռուսաստանի դեսպանատունը եւս մինչ այժմ քայլեր չի ձեռնարկել, մինչդեռ Ելենա Վարդանյանը, իր իսկ խոսքերով, դեսպանատան համապատասխան պաշտոնյաներին բազմիցս ահազանգել է ամուսնու առողջական վիճակի վատթարացման վերաբերյալ եւ օգնություն է խնդրել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅԻՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / հեռ. 562941, 582483
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՄԲԱԳԻԿ

Ինչպես ենք տօրինելու մեր փողերը: Շուրա՛

Չվերագրանցված կազմակերպություններ եւ նրանց բանկային հաշիվները

Ոմն-ինչ մոռացված «խաբված ավանդատուներ» հասկացությունը հնարավոր է, որ կրկին շրջանառության մեջ հայտնվի: Պարզապես այս անգամ այդպիսիք կդառնան ոչ թե առանձին մարդիկ, այլեւ կազմակերպություններ: Հայտնի է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական նոր օրենսգրքի, հանջը «որոշակի խնդիրներ է ստեղծել» նրանց «բանկերի կողմից սպասարկելու տեսանկյունից»: Բարեբախտաբար, բացի այս խիստ «հրատապ» նորությունից, տեղեկացվում է նաեւ, որ վերջերս կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում հարցի կանոնակարգման նպատակով: Սակայն, դժբախտաբար, տեղեկատվությունն այդքանով, ըստ էության, սահմանափակվում է եւ որեւէ մանրամասնություն որոշման վերաբերյալ պաշտոնապես չի ասվում: Այս առումով ավելի մեծ «հաջողություն» ունեցավ մեր երկրորդ հարցադրումը, որն առնչվում է այն կազմակերպություններին, որոնք չեն վերագրանցվելու եւ լուծարվելու են: Կենտրոնական բանկի պատասխանում հայտնվում է, որ դրանց հաշիվները տնօրինվելու են «օրենսդրությամբ սահմանված իրավահաջորդների կողմից»: Այս դեպքում եւս փաստորեն որեւէ լրացուցիչ տեղեկություն չի հայտնվում, քանի որ լուծարված կազմակերպությունների գերակշիռ մասը իրավահաջորդներ չի ունենալու, եւ դրանց բանկային հաշիվներում եղած գումարների ճակատագիրը մնալու է անորոշ: Կառավարությունում եւ Կենտրոնական բանկում անկասկած տեղյակ են այդ մասին: Այստեղ վկայակոչել գործող օրենսդրության պահանջները, նշանակում է ոչինչ չանել եւ խնդրի կարգավորումը թողնել առկախ: Կամ գուցե կառավարության դեռեւս չիրաժարակված որոշմա՞ն մեջ որեւէ ելք է առաջարկվում: Գուցե: Այնուամենայնիվ, միանշանակ է մեկ բան, որ դարձյալ ընդունվել է օրենք (քաղաքացիական օրենսգիրքը), որտեղ մանանշված չեն դրա հետեւանքով առաջացող խնդիրների կարգավորման մեխանիզմները: Այսինքն դարձյալ գործ ունենք մեր իրավագիտական մտքի եւ օրենսդիր իշխանության համատեղ ջանքերով լույս աշխարհ եկած կիսատպռատության հետ: Խնդիր, որը, կարծես, հավերժական է դարձել:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավ եք դուք, հավ չենք մենք խուլիգանությանը վերջ տվեք

«Ազգը» 2000 թ. դեկտեմբերի 20-ին տպագրել էր տողերիս հեղինակի «Հասարակության այլասերման ձեւերից մեկը» հոդվածը, որի խնդիրն էր ներկայացնել այսօրվա մեր քաղաքի տրանսպորտին առնչվող անհանդուրժելի կողմերից մեկը: Այն վերաբերում է մասնավորապես երթուղային տաքսիներում ռադիոյով եւ մագնիտոֆոնով բարձրաստիճան հնչողությամբ ուղեւորներին «հրամցվող» ցածրագույն մակարդակի երաժշտական աղբին, որը համեմված է բացահայտ այլասերվածություն քարոզող խոսք-գաղափարով:

Համեմատելով նման երգ-երաժշտության անառակությունը հասարակական վայրերում հնչեցնելու՝ աշխարհի քաղաքակիրթ երկրներում առկա վերաբերմունքի հետ, նաեւ ամփոփելով մի շարք արտերկրացի եւ հայաստանյան սոցիոլոգների, բժիշկ-հոգեբանների եզրահանգումները տվյալ հարցի շուրջ, հիշյալ հոդվածում որոշակի առաջարկություն էր արված ՀՀ տրանսպորտի նախարարությանը՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել մեզանում վաղուց հասունացած խնդրո առարկա հարցի լուծման համար:

2000 թ. դեկտեմբեր 21-ին զանգահարեցի ՀՀ տրանսպորտի նախարարություն, անձամբ տեղեկացնելու սույն հրապարակման եւ **«Ազգի»** խմբագրության կողմից նրա ընթացքին հետաքրքիր լինելու մասին:

Նախարարի քարտուղարուհուց պատասխան ստացա. «Պարոն նախարարը քաղաքում չէ, տեղակալը՝ տեղում չէ: Ես այսօր տեղյակ կպահեմ աշխատակազմին, իսկ վերադարձից հետո՝ նաեւ նախարարին»:

Ակնհայտ է, որ ցայսօր նախարարության կողմից չի՛ ձեռնարկվել եւ ոչ մի միջոց սույն խնդրի լուծման համար: Ավելին. հայերը երրորդ հազարամյակ մտան ազգային մի հանճարեղ գյուտով: Հայտնություն, որին իրավամբ արժանի կարող է լինել իր՝ քրիստոնեության ընդունման 1700-ամյակը «ճոխ նշող» ժողովուրդը:

Այն լայնորեն եւ «բարձորեն» հնչում է նոր դարի առաջին իսկ օրերից քաղաքային տրանսպորտում (միամտաբար չմտածենք, որ միայն այնտեղ, նաեւ՝ փողոցներում, տրձաններում, գեղանցումներում եւ այլուր, սակայն արդ խոսքը տրանսպորտի մասին է): Դա՝ «Հայ ես դու» տարածված ռաբիսական ալյագերի մեղեդիով նորովի եւ խոր վերաիմաստավորում գտած երգն է.

Հավ ես դու, հավ եմ ես,
Վախ ֆո բուդը ուտեմ ես:

...1960-ականներին ամբողջ Խորհրդային Միությանը պահանջվեց մեկ օր, որպեսզի տրանսպորտի նախարարության հատուկ հրամանով եւ համապատասխան գերատեսչությունների ջանքով՝ դաղարեցվի փողոցներում մեքենաների շչակներից ստեղծվող աղմուկը: Շաչիչների չօգտագործման մասին օրենքը խախտող վարորդների համար սահմանված էր գումարային մեծ տույժ, ապա՝ վարորդական իրավունքների զրկում:

Նշանակում է, հոդվածս արծարծված խնդիրն արդեն իսկ ունենալով նման նախադեպ, ցանկության պարագայում կարող է լուծված լինել: Որովհետեւ միանշանակորեն պարզ է, որ անպատեհ աղմուկ չպետք է լինի ոչ միայն տրանսպորտից դուրս, այլեւ տրանսպորտի մեջ:

Վերջապես պետք է հասկանալ եւ հասկացնել, որ քաղաքային եւ ոչ մի փոխադրամիջոցի վարորդ իրավունք չունի աշխատանքի ժամին ղեկին նստած միացնել որեւէ ձայնագրություն (դա իր անձնական տունը չէ): Այն շեղում է իր ուշադրությունը՝ վտանգելով ուղեւորների կյանքը, բացի այդ, հանդիսանում է հասարակությանը, մարդուն բռնանալու, շաս դեպքերում՝ այլասերելու ձեւերից մեկը:

Անհետաձգելիորեն պետք է գտնել նման «երաժշտությանը», իմա՝ նման հոգեւոր եւ մտավոր խուլիգանությանը վերջ տալու միջոցները:

Հակառակ դեպքում, հեռու չէ այն օրը, երբ մի առավոտ ժողովուրդը կարթնանա ոչ որպես քրիստոնեության 1700-ամյակը տոնող ազգ, այլ ողորմելի ինքնագիտակցությամբ Աստծո խորանին ինքնամատույց հավերի կույտ:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

***Խմբագրության կողմից**- Թամար Հովհաննիսյանի վերոհիշյալ հրապարակման մասին ցայսօր խմբագրությունը բազում արձագանքներ է ստանում, դժբախտաբար՝ միայն ընթերցող հասարակությունից, որ ըստ էության հոդվածում բարձրացված պրոբլեմի զոհն է: Խմբագրությունս միանշանակորեն համամիտ լինելով հեղինակի դիրքորոշմանը, ակնկալում է ՀՀ տրանսպորտի նախարարությունից եւ քաղաքապետարանից անհետաձգելիորեն միջոցներ ձեռնարկել Երեւանի (եւ ամբողջ հանրապետության) քաղաքային տրանսպորտին վերաբերող հիշյալ կարեւոր խնդրի լուծմանը:*

ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ

Քոչարյանն ու Ալիեւը կհանդիպեն Փարիզում

Սկիզբը էջ 1

Սա թուրքերի կողմից կընկալվի որպես աջակցություն. 1991 թ.-ից Թուրքիան հրաժարվում է Հայաստանի հետ հարաբերություններ հաստատել՝ առաջ քաշելով «ԼՂ-ից հայկական ուժերի դուրսբերման» նախապայմանը:

ԼՂ հակամարտության լուծման շուրջ վերջին երկու շաբաթվա ընթացքում ամենաբարձր մակարդակով մի շարք քննարկումներ են եղել. հունվարի 10-ին ՌԴ նախագահ Պուտինն ու Հ. Ալիեւը, ապա Պուտին-Քոչարյան, Պուտին-Ալիեւ, Շիրակ-Պուտին հեռախոսազրույցները: Պուտինի Բաքու այցելությանը նախորդեց ՌԴ անվտանգության քարտուղար Ս. Իվանովի այցը Երեւան, որը մնաց ՁԼՄ-ների ուշադրությունից դուրս: Հունվարի 21-ին կրկին Երեւանում էր ՌԴ նախագահին առընթեր Անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Իվանովը: Ինչպես հաղորդում է «Սնարք» գործակալությունը, այցի ընթացքում Ս. Իվանովը հանդիպել է ՀՀ նախագահ Քոչարյանի, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հետ: Կողմերը քննարկել են հայ-ռուսական հարաբերություններին առնչվող հարցերի լայն շրջանակ եւ տարածաշրջանի իրավիճակը՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Բաքու կատարած այցի համատեքստում: Հունվարի լույս 22-ի գիշերը Իվանովը Երեւանից մեկնել է Բաքու: Համաձայն ադրբեջանական աղբյուրների, ՌԴ ԱԽ քարտուղարը հանդիպել է նախագահ Հեյդար Ալիեւին, որից անմիջապես հետո մեկնել Բաքվից: Ինչպես Երեւանում, այնպես էլ Բաքվում ՁԼՄ-ներն այցի մասին տեղեկացված չեն եղել: Եթե հանրագումարի բերենք վերոնշյալ բոլոր հանդիպումները եւ հեռախոսազրույցները՝ անկախ մանրամասներից, ապա նկատելի է ԱՄՆ-ի բացակայությունը: Չէ որ դեռ 1997 թ. Վաշինգտոնը Հարավային Կովկասը հայտարարել է իր հետաքրքրությունների գոտի: Շմոռանանք նաեւ, որ ԱՄՆ-ը ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահող երեք երկրներից՝ ի թիվս Ռուսաստանի եւ Ֆրանսիայի:

Հակաֆրանսիական հիստերիան չի կարող հակազդեցության միջոց լինել

Սկիզբը էջ 1

Հարցը, սակայն, սոսկ թուրքական իշխանությունները չեն, այլ Թուրքիայի հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, ինչու չէ, նաեւ գործարար շրջանակների հակազդեցությունները: Դրանց մասին պատկերացում տալու համար նշենք, որ հունվարի 20-21-ին վերոհիշյալ կազմակերպությունները Թուրքիայի քաղաքներում ցույցերով բողոքարկեցին Ֆրանսիայի ԱԺ-ի ընդունած որոշումը: Դրանցից «Ազգայնական շարժում» եւ «Մեծ միասնություն» կուսակցությունները սեւ ծաղկեպսակներ դրեցին Անկարայում Ֆրանսիայի դեսպանատան, իսկ Ստամբուլում եւ Իզմիրում՝ ֆրանսիական հյուպատոսարանների դարպասների առջեւ: Միաժամանակ, «Ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերն ուղերձով դիմեց ժակ Շիրակին եւ կոչ արեց նրան կասեցնել Ֆրանսիայի ԱԺ-ի որոշումը՝ հասնելու համար դրա հետագա չեզոքացմանը:

Նույն օրերին, երբ Ստամբուլի բանջարեղենի շուկան դադարեցրեց ֆրանսիական խնձորի վաճառքը Թուրքիայում՝ հրաժարվելով հետագա ներմուծումներից, նույն Ստամբուլում գրաքալաքը շատրեց հայտարարել Ֆրանսիայում տպագրված գրքերը հետայսու չվաճառելու որոշման մասին: Այդ ընթացքում թուրքական մի քանի համալսարաններում ռեկտորատի որոշումով ուսուցման ցուցակից հանվեց ֆրանսերենի դասավանդումը: Որոշմանը հետեւեցին Թուրքիայում ֆրանսիական թերթերով դպրոցների փակման հայտարարությունները:

Մինչ թուրքական պետհեռուստատեսությունը որպես, հակազդեցության դրսեւորում, հաջորդականությամբ տեղեկացնում էր վերոհիշյալ միջոցառումների մասին, ահա նույն հեռուստատեսության «Կիրակնօրյա համայնապատկեր» ծրագրով էջեւիթի կառավարության մաս կազմող «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավոր Բյուլենթ Ամարջալընը միջոցառումները վերագրեց ձեռնարկողների անմտությանը: Հունվարի 22-ին ուղիղ եթերում այդ միջոցառումներին անդրադարձավ նաեւ տնտեսական մեկնաբան Զուլֆիքար Դողանը, մասնավորապես ասելով. «Ֆրանսիայի դեմ տնտեսական պատժամիջոցների կիրառումը, այդ թվում առեւտրական, սահմանափակումների գործադրումն իրականում չափազանց դժվար է: Որքան էլ թուրքական հասարակությունն այդպիսի ակնկալիքներ ունենա, Թուրքիան պատշաճորեն չի կարող պատժամիջոցների դիմել: Դա ուղղակիորեն հակասում է համաեվրոպական այն կառույցների գործունեության սկզբունքներին, որոնց անդամակցում է Թուրքիան»:

Միջոցառումների հարցում Դողանին հետեւեց Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Հասան Քոնին: Նա ոչ միայն կասկածի տակ դրեց դրանց նպատակահարմարությունը, այլեւ դրանք համարեց ժամանակավոր, թե մեկ-երկու ամսից հետո մոռացության են տրվելու: Ըստ Քոնիի, այդ միջոցառումները ժամանակավրեպ են նաեւ, քանի որ միանգամայն հակասում են Եվրամիությանն անդամակցելու եւ եվրոպական երկրների հետ ինտեգրացվելու թուրքական պետության առաջադրանքներին: «Մի կողմից, ասաց նա, ԵՄ-ին անդամակցելը խնդիր եք դնում ձեր առջեւ, մյուս կողմից՝ ֆրանսիական թերթերով դպրոցներն եք փակում: Ինտեգրացումից խոսում եք, բայց միաժամանակ Ֆրանսիայի հետ առեւտրական հարաբերություններն եք խզում»:

Այլ կերպ, Ֆրանսիային հակազդելու արդյունավետ միջոց չեն կարող լինել նաեւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների եւ գործարար շրջանակների ձեռնարկած միջոցառումները: Դեռ ավելին, դրանք ավելի քան անտրամաբանական են հնչում: Այս ամենից հետո հարց է ծագում՝ ո՞րն է արդյունավետ միջոցը: Ըստ երեւույթին Բալկաններում, Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Անդրկովկասում ու Միջին Ասիայում Թուրքիայի ռազմավարական նշանակության կարեւորումը: Չպետք է սակայն մոռանալ, որ նշված տարածաշրջաններում Թուրքիայի միջոցով գործելու մենաշնորհը ԱՄՆ-ին է պատկանում: Ուրեմն Ֆրանսիան նման ակնկալիքներ ունենալ չէր կարող, այլապես Հայոց ցեղասպանության հարցում բոլորովին այլ կերպ կվարվեր:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի նկատմամբ Թուրքիայի վարվելակերպին, ապա մտակվել է «հակազդեցության համապատասխան» ծրագիր: Դա երեկ քննարկվել է Ազգային անվտանգության խորհրդի նիստում, որին մասնակցում էր նաեւ Փարիզում Թուրքիայի դեսպան Սոմեզ Քյոխալը, որ խորհրդատվական նպատակով օրերս ետ էր կանչվել Անկարա:

ԱԶԳ

Ակնարկներ

Գրողի խոսք Հայոց ցեղասպանության մասին

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

էլ չգիտես՝ զարմանա՞ս թե տխրես, զայրանա՞ս թե ի վերջո այլեւս ծիծաղես: Ամեն անգամ, որ Հայոց ցեղասպանության լոկ «ճանաչման» հարցն է քննարկվում որեւէ երկրի բարձր ատյաններում, թուրք ղեկավար շրջաններն անմիջապես բողոքում են աղմուկ-աղաղակ բարձրացնելով ու հակամիջոցներ սպառնալով աջ ու ձախ, ըստ որում նաեւ Հայաստանի դեմ: Ու դարձյալ չգիտես ինչ մտածես, երբ հզոր տերությունների բարձրագույն իշխանությունն էլ տագնապում է այդ աղմուկից, երեւի վախենում սպառնալիքներից եւ ջանում կոծկել հարցը, նույնիսկ իր սեփական բարձր ատյաններին հորդորելով, ինչպես տեսանք, դադարեցնել այդ սարսափելի «ճանաչման» քննարկումը, կամ էլ ծախողեցնելով ամենաբարձր ատյանում պաշտոնական որոշման ընդունումը:

Խնդիրն արդեն, այսպես ասած, համաշխարհային ֆարսի, խորքում ողբերգական զավեշտի կերպարանք է ստանում: Չգիտեմ ով ինչպես, բայց իմ մեջ, այո, դա ծիծաղ է հարուցում այլեւս, դառն, զուտ մարդկայնորեն շատ դառն ծիծաղ՝ ամբողջ կյանքում որպես հայ մարդ զայրույթի եւ տխրության միջեւ տարուբերվելուց հետո:

Ողբերգական զավեշտ, այսինքն աբսուրդ, որովհետեւ բոլորը գիտեն ճշմարտությունը, բայց վերին իշխանություններում, այն էլ հզոր տերությունների մակավանդ, «ճանաչել-չճանաչելու» խաղն են խաղում այսպես թե այնպես, կիսաս-պռաս բարբառելով կամ էլ մունջ ծեւանալով: Խաղ, որ առավել եւս զավեշտական է դառնում պտտվելով «ցեղասպանություն» բառի շուրջ՝ ասե՞լ թե չասել այդ գլխացավանք տվող բառն այս հարցում: Եվ իմ ծիծաղն էլ առավել եւս դառնանում է իրոնիկ մի երանգով, որովհետեւ «մարդկային իրավունքների» մասին քարոզողներ են նրանք, անընդհատ հոլովում են այդ երկու իմաստազուրկ դարձած բառերը տեղի-անտեղի, բայց բուն մարդկային իրավունքները հաճախ ոտնահարում են այստեղ-այնտեղ, իսկ այս հարցում՝ նամանավանդ: Դե, իհարկե՝, հասկանալի է, ոտնահարում են խաղաքաղաքական, տնտեսական եւ էլ չգիտեմ ինչ կողմնակցական շահերից ելնելով, այլարոթական շահերից, որոնց համար զոհում են համամարդկային բարոյականության ճակատագրական շահերը, բացահայտորեն ծիծաղի առարկա դարձնելով ու արժեզրկելով դրանք, ու դարձյալ՝ հենց այս ողբերգական աբսուրդ զավեշտում նամանավանդ:

Իսկ թուրքե՞րը: Նրանք բոլորից լավ գիտեն ճշմարտությունը: Շատ լավ գիտեն: Գիտեն ազգովին: Վստահ եմ, նրանց երիտասարդ սերունդներն էլ այսպես թե այնպես գիտեն, հակառակ իրենց գլխին կարդացված ազգայնամոլական սուտ քարոզչության, որովհետեւ Հայոց ցեղասպանության նման օրը ցերեկով համաստարածորեն կատարված եղելությունն այնքան էլ հեշտ մոռացվելիք բան չէ, ավանդաբար հաղորդվում է սերնդե-սերունդ, թեկուզ ընտանիքներում պառից զավակ ու թոռ ու ծոռ: Իմ յոթանասունհինգամյա կյանքում, տարբեր առիթներով, արտասահմանում ապրած օրերիս, օրինակ, երբ Կիպրոսում ուսանելուց հետո թուրքական նավով վերադառնում էի Հունաստան, կամ էլ հետագա տարիներին Մոսկվայում կամ այլուր քանիցս նույնիսկ հանդիպել եմ խելացի թուրքերի, որոնք ոչ միայն գիտեին, այլեւ դատապարտում, անգամ ոմանք անիծում էին իրենց «հայրենակից» (իրենց բառով) հայերի հանդեպ կատարված «այդ հիմարությունը» (իրենց բնորոշումով), որից «տուժեց» իրենց երկիրը, որին այնքան օգուտ են տվել հայերն անցյալում, ինչպես գիտեին ու խոստովանում էին:

Բայց թուրք ղեկավար շրջանները շարունակ ստել, նենգափոխել ու ժխտել են ոճրային եղելությունը, որը պատմության մեջ աննախընթաց են որակել ականատես եվրոպացիներ եւ այլոք, անգամ թուրքեր, եւ որը կես առ կես համապատասխանում է «ցեղասպանություն» իրավական բնորոշմանը: Ժխտել են շարունակ, իսկ այսօր, այս միջազգային «ճանաչման» հարցին դեմ կանգնած, ժխտում են առավել մոլեգնորեն: Բայց տասնամյակներով հենց կես առ կես շարունակել են ցեղասպանությունը, իրենց նախնի երիտթուրքերի կողմից ֆիզիկական ոչնչացումով ու արտաքսումով հայազրկված Հայաստանը կոչելով Արեւելյան Անատոլիա, ոչնչացնելով հայկական բազմադարյա մշակույթի հուշարձաններ (օրինակ՝ համաշխարհային ճարտարապետական արժեք ունեցող Տեկորի տաճարը), կամ էլ շահաբեր տուրիստների աչքին որպես թուրքական ներկայացնելով հայկական բազմապիսի մշակութային արժեքներ եւ առհասարակ ջանալով այդ «Արեւելյան Անատոլիան» հայազրկել նաեւ մշակութային, պատմական իրողությունների բնաջնջումով կամ նենգափոխմամբ, այո, կես առ կես ըստ ցեղասպանության բնորոշման: Ոմանք երբեմն հասել են նույնիսկ Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմական գոյությունն իսկ ժխտելու զառանցանքին, որ արդեն ցեղասպանության հիվանդագին ասիճանն է, մի քայլ էլ անդին: Եվ մտածում եմ՝ արդյոք չե՞ն գիտակցում, որ այս միջազգային «ճանաչման» խնդրի առթիվ բարձրացրած իրենց աղմուկն էլ հենց ցեղասպանության բացահայտ շարունակությունն է, ավելին՝ հաստատումն է իրենց իսկ կողմից, իրենց ժխտման իսկ ժխտումն է, որ կատարում են թեկուզ ակամա, մոլուցքից կուրացած, վերջին հաշվով իրենք իրենց իսկ վնասելով ամեն տեսակետից:

Եվ միաժամանակ իրենց հայատյացության նոր ալիքն են բարձրացնում այդ ղեկավար շրջաններն այս առթիվ, ոմանք նույնիսկ բացահայտորեն ամբոխավարական արտառոց, հրահրիչ արտահայտություններով: Թեպետ դա ինձ տխրեցնում է զուտ մարդկայնորեն, բայց վաղուց չի խոցում այլեւս որպես հայի, որովհետեւ ունեմ դրա հոգեբանական բացատրությունը: Այդ ճշգրիտ ու խոր բացատրությունը տվել է մեծագույն հոգեբան Դոստոեւսկին իր համաշխարհային գլուխգործոց «Կարամազով եղբայրներ» կոթողային վեպում, որը թարգմանելու պատիվն ու երջանկությունն եմ ունեցել շատ տարիներ առաջ: Վեպի կենտրոնական մի տիպի բնավորությունը վերլուծելիս ահա թե ինչ է հայտնաբերում Դոստոեւսկու խորաթափանց աչքը.

«Նա ուզեց վրեժ լուծել բոլորից՝ իր իսկ արած ստորություններ համար: Այս առիթով հանկարծ հիշեց, թե ինչպես մի անգամ, տարիներ առաջ, հարցրել էին իրեն. «Ինչո՞ւ եք այսինչ մարդուն այդպես ասում»: Եվ այն ժամանակ պատասխանել էր խեղկատակի անամոթության մոլուցքով. «Ասեմ ինչու. ճիշտ է, նա ինձ ոչինչ չի արել, բայց ես ինքս մի շատ զզվելի ստորություն արեցի նրա հանդեպ, եւ հենց դրա համար էլ իսկույն ատեցի նրան»: Հիմա հիշելով այդ, նա հանգիստ ու չարամիտ ժպտաց՝ տատանվելով մի րոպե: Հետո աչքերը փայլեցին, նույնիսկ շրթունքները դողացին: «Դե՞հ, քանի որ սկսել եմ, արի վերջացնեմ»,- վճռեց նա հանկարծ: Այդ վայրկյանի նրա ամենաթաքուն զգացողությունը կարելի էր արտահայտել հետեւյալ բառերով. «Էլ չես կարող հիմա վարկդ վերականգնել, է՛հ ուրեմն, արի մե՛կ էլ թքիր նրանց վրա անամոթաբար, այսինքն թե՝ չեմ ամաչում ծեզնից ու վե՛րջ»:

Ամեն ինչ ասված է այստեղ...

Ողբերգական ֆարս-զավեշտում մի նոր դարձվածք, մի նոր ինտրիգային դրվագ սկսվեց վերջերս, մի խաղ, որ ուզում է հեգնել կարծես, բայց իր դեմ հեգնանք է հարուցում, որովհետեւ թափանցիկ բլեֆ է միայն: Առաջարկվում է, որ պատմաբանները քննեն հարցը՝ ցեղասպանություն եղե՞լ է թե չի եղել: Թափանցիկ բլեֆ է, որովհետեւ առաջարկն իսկ ուզում է կարծես թելադրել, որ քննությունը ցույց կտա, թե չի եղել ցեղասպանություն: Նախ՝ ովքե՞ր են լինելու իրենց կողմից այդ «պատմաբանները»: Նրա՞նք, ովքեր տարիներով խեղաթյուրում, նենգափոխում էին պատմությունը, կոծկում իսկական փաստերը, չէին խորտում նույնիսկ բացահայտորեն ցինիկ հերյուրանքներ մոգոնել, թե իբր հայերն են արել ցեղասպանությունը: Բայց լավ, ենթադրենք «անաչառ» պատմաբաններ են լինելու: Ի՞նչ փաստեր են քննելու նրանք:

Ինքս՝ կենդանի փաստ, պետք է ապացուցեմ, որ ես ե՞ս եմ՝ Դեր Զորի անապատները քված, այնտեղ կոտորված եւ իմ չտեսած երկու պապերի, մի տատի, մանուկ հորաքրոջ ու հորեղբոր եւ այլ ազգականների հետնո՞ղը: Հրաբխով փրկված եւ տնահան-հայրենազուրկ-գաղթական դարձած ծնողների զավա՞կ, որ ծնվել է օտարության մեջ տվայտող ընտանիքում, նույնպես զրկված հայրենիքից ու այնտեղ իր պապենական օջախից: Ծնունդով իսկ տարագիր հայ մա՞րդ, որ մանկուց ի վեր ամբողջ կյանքում կրել է իր մեջ հոգին թունավորող այս զայրագին ցավը, օր-օրի ավելի ու ավելի իմանալով բազում ու բազում, շուրջ մեկուկեսերկու միլիոն հաշվվող (ո՞վ կարող է ճշգրտել թիվն անհերեւակայելի վայրագությամբ կատարված այդ ցեղասպանության գեհենում, ուր նետել էին մի ամբողջ անպաշտպան ժողովրդի) նահատակների մասին, իմանալով իր ծնողների նման գաղթական դարձած շատ ու շատ այլ կենդանի վկաներից իր շրջապատում, հատորներով ստացվելիք հուշերից, նամակներից եւ վավերագրական բազմապիսի վկայություններից, որ թղթին են հանձնել ոչ միայն փրկված հայերն, այլեւ ուրիշ ազգերի ականատեսներն, անգամ թուրքեր: Ի դեպ, այդ հատորները ուսումնասիրել եմ ժամանակին, երբ սկսել էի գեղարվեստական երկ գրել ցեղասպանության մասին, բայց չկարողացա ավարտին հասցնել երկը, որովհետեւ ամեն անգամ, որ կարդում էի այդ կենդանի վկայություններն իբրեւ աղբյուր, ապրումներս այնքան տանջալի էին լինում, որ տառապում էի ոչ միայն հոգեպես, այլեւ ֆիզիկապես՝ օրեր տեւող սաստիկ գլխացավերից:

Այս բոլորը իմ ճակատագիրն են դարձել այս աշխարհում, եւ այս բոլորով, ուրեմն, պետք է «պատմաբաններին» ապացուցեմ, որ ես ե՞ս եմ: Եվ աշխարհով մեկ ցրված միլիոնավոր հայերից ամեն մեկը, որի ճակատագիրն են դարձել նույնպես այս բոլորը ցեղասպանության պատճառով, պետք է ապացուցի, որ ինքը ի՞նքն է: Հաշվի առնելո՞ւ են նաեւ այն մեծագույն լուռ վկային, որ ինքը տասներորդ մասն է Հայոց աշխարհի, այն բազմահազարամյա Հայոց աշխարհի, որի մասին գրել են Ասորեստանի արքաներից, պարսից Դարեհից, Հերոդոտոսից, Քսենոֆոնից, Տակիտոսից, Ստրաբոնից եւ այլ բազմաթիվ արեւմտյան եւ արեւելյան պատմիչներից սկսած, անընդհատ հաշվի առնելով նաեւ հայ պատմիչներին, գրել են մինչեւ մեր օրերը, եւ որը, սակայն, իր բնիկ բազմահազարամյա հայ ժողովրդից դատարկվեց հենց այդ ցեղասպանությամբ, իսկ այսօր աշխարհին ուզում են ներկայացնել Արեւելյան Անատոլիա նենգափոխված անունով:

Եթե այս բոլորը ցեղասպանություն ապացուցող փաստեր չեն համարվելու, ի՞նչ է, ուրի՞շ փաստեր են փնտրելու, այսինքն չգիտեմ ինչ փաստաթղթե՞ր: Հազարներով են դրանք ամեն տեսակի: Վաղուց հայտնի, բազմիցս հրապարակված, աշխարհում տարածված փաստաթղթեր, որոնք լրիվ բավական են աչք, խիղճ, անաչառություն, վերջապես տարրական բարոյականություն եւ արդարության զգացում ունեցող պատմաբանի համար՝ լինի թուրք, լինի ուրիշ որեւէ ազգի: Ու դեռ փաստաթղթեր, որոնք ի հայս են գալիս զանազան երկրների արխիվներից: Ահա ես էլ այստեղ բերեմ երեւի դեռ անհայտ համարվելիք մի փաստաթուղթ: Սա վկայությունն է անգլիացի դասական մեծ գրող Ջոն Գոլսուորդիի, որի գլուխգործոց «Ֆորսայթների պատմությունը» վիպաշարն էլ թարգմանելու պատիվն ու երջանկությունն եմ ունեցել: Մի հատված է այն նամակից, որը նա գրել է իր բարեկամ Ռ. Հ. Մորթեմին 1915 թվականի դեկտեմբերի 15-ին, եւ որի հատուկ կարեւորությունը ցույց կտամ մեջբերելուց հետո: Ահա այդ հատվածը.

«Գերմանացիների մասին. չի կարող տարակույս լինել, որ մռայլ ցինիզմը, առաջանալով պրուսական ռազմական վերնախավից ու պրոֆեսիոնալ կորիզից եւ նպաստավոր հող գտնելով գերհագեցած, գերհաջողակ ազգային նկարագրում, ողբերգական զարգացումներ է ունեցել այդ ժողովրդի մեջ: Երկու կարծիքներ միայն, որ հենց Հիտլերն էլ, ինչպես հայտնի է, պրուսական «մռայլ ցինիզմով» օգտագործեց «հայերի բնաջնջման» փաստը իր նպատակների համար, անգամ դեռ իշխանության չհասած ու հետո նաեւ:

Ավելորդ չի լինի այստեղ հիշել, որ Ջոն Գոլսուորդին, 1919-ի ապրիլի 26-ին գրած մի նամակով, ԱՄՆ-ում կատարած իր դասախոսական շրջագայության ամբողջ հոնորարը՝ 4000 դոլար, հատկացնում է հայ եւ սիրիացի գաղթականներին մատուցվող օգնության ֆոնդին (նույն գրքում, էջ 477):

Ամփոփեմ խոսքս: Իհարկե, այնքան միամիտ չեմ, որ կարծեմ, թե մի հասարակ գրողի այս խոսքը կարող է նշանակություն ունենալ քաղաքական եւ այլ շահերի շուկայում: Ճակատագիրս ինձ ստիպել է բազմիցս անդրադառնալ իմ գրվածքներում հոգուս այս ցավին, թող սա էլ, ինչպես ասում են, սիրտ պարպել լինի հերթական անգամ, այս ուշ տարիս մանավանդ: Բայց չեմ կարող այս անգամ չասել հատկապես՝ խոսքս ուղղելով թուրք ղեկավար շրջաններին, որ իրենց այդ համառ ժխտումը, թուրքերեն մի դիպուկ արտահայտությամբ, արդեն «դդումի համ տվեց» (կաբակ դաղը վերդի): Հասկանում եմ, այդ ժխտման խորքում, մի ուրիշ արտահայտությամբ, որ կգտնեք անգլերենում, կա «դեմը փրկելու» մղումը նաեւ, մակերեսին երեւացող մղումներից ավելի էական գուցե, հոգեբանորեն: Բայց դեմը փրկելու լավագույն ձեւը, պարզապես, դեմը լվալն է երիտթուրքերի թողած արյունից, ինչպես գերմանացիները, ձեզ օրինակ, արեցին Հիտլերից հետո: Մարդկայնորեն կա վերջապես Ջոյսում ասված բանը, որ ձեր հոգին էլ կլվա ու կփրկի, իսկ ձեր այդ լվացումը ինձ նմաններին կարող է գոնե բարոյական մի գոհացում տալ ամենից առաջ, մեր անմեղ նահատակների հոգին էլ գոնե մի քիչ խաղաղեցնել մեր արտում: Մաղթում եմ ամենայն անկեղծությամբ:

Իսկ այս աշխարհի մեծերն էլ, հզոր տերությունները, պիտի վերջապես, հանուն արդարության, գերադասե՞ն մի օր համամարդկային շահերն իրենց այսրոպական շահերից՝ մանավանդ բարոյական հույժ կարեւոր խնդիրներում: Հայոց ցեղասպանության անտեսումն ու անպատիժ մնալը տասնամյակներով, հայտնի է առիթ տվեց քաներորդ դարում ցեղասպանությունների ալիք-ալիք հորձանքի, որն ի վերջո գոնե հանգեցրեց ցեղասպանության երեւույթի բնորոշմանն ու դատապարտմանը սկզբունքորեն: Բայց կարելի՞ է շարունակել Հայոց ցեղասպանության անտեսումը: Դա մի սկզբնական վերք է, որ պետք է բուժվի համամարդկային առողջության համար: Դա մի սկզբնական մեղք է, որ պետք է քավվի համամարդկային հոգում: Ժամանակն է արդեն, երբ սկսվում է նոր հազարամյակը: Այլապես, այդ չբուժված վերքը, այդ չքավված մեղքը կարող են, վիրավորված արդարության չգիտես ինչ բնական օրենքով, գուցե ավելի չարագուշակ հետեւանքների հասցնել նոր-նոր վտանգավոր եւ ճակատագրական խմորումների ենթարկվող այս աշխարհում: Եթե անտեսվեն, կշարունակեն գործել հասարակական մութ ենթագիտակցության մեջ, ավելի վաս: Քարոզ չեմ կարդում, քավ լիցի: Ասածս միստիկա էլ չէ: Մարդկային պատմությունը քանիցս ցույց է տվել, որ, այո՛, կան բնական թաքուն օրենքներ, որոնք կարող են վրեժ լուծել անհայտ ինչ-ինչ կերպերով, երբ չհարգվեն դրանք, մանավանդ երբ դրանց դեմ գործեն մարդիկ՝ լինի անհատական, լինի հասարակական կյանքում: Հենց քաներորդ դարում քանիցս մեր աչքով չտեսա՞նք, թե ինչպես բնական օրենքները վրեժ լուծեցին նրանցից, ովքեր դրանց դեմ գործեցին՝ անհաշիվ տառապանքներ պատճառելով մարդկությանը:

15 դեկտեմբեր, 2000 թ.

ԱԶԳ

Միջազգային

Բուշի պաշտոնակալությունն ուղեկցվեց ցույցերով

Նրան օրինական նախագահ է համարում ամերիկացիների 51 տոկոսը

Հունվարի 20-ի կեսօրին Վաշինգտոնում Կոմիսոլիումի գմբեթի ներքո տեղի ունեցավ ԱՄՆ 43-րդ նախագահ Ջորջ Բուշ կրտսերի պաշտոնակալության հանդիսավոր արարողությունը: Աջ ձեռքը բարձրացրած եւ ձախն Ավետարանի վրա դրած նա երդվեց պահպանել եւ պաշտպանել երկրի սահմանադրությունը: Բուշի դիմաց ԱՄՆ գերագույն դատարանի նախագահ Ուիլյամ Ռենքիստն է: Նախագահ ընտրվելու համար Բուշ կրտսերը պարտական է նրան եւ այս 4 պահպանողական դատավորներին, որոնք վերջ դրեցին Ֆլորիդայում քվեների վերահաշվարկմանը, եւ դրանով իսկ պահպանեցին Բուշի չնչին առավելությունը:

Բուշ կրտսերի հետեւում կանգնած էին արդեն նախկին նախագահ Բիլ Քլինթոնը եւ փոխնախագահ Ալբերտ Գորը: Առաջինն ակնհայտորեն գոհ էր. 54-ամյա Քլինթոնն ամերիկացիներին թողնում է բարգավաճ երկիր եւ չի դատվելու Մոնիկա Լեւինսկու գործով: Հարցումների տվյալների համաձայն, Քլինթոնը վերջին տասնամյակների ամենասիրված նախագահն է: Իսկ Ալբերտ Գորը ջանում էր թաքցնել դժգոհությունը նախագահական ընտրարշավի արդյունքներից:

Չնայած տեղացող անձրեւին, բյուրավոր մարդիկ եկել էին ողջունելու նորընտիր նախագահին: Բայց Կոմիսոլիումի շենքից մի քանի հարյուր մետր հեռու ոստիկանության ուժերը փորձում էին զսպել հազարավոր ցուցարարների, որոնք բողոքում էին Բուշ կրտսերի ընտրության դեմ: Նրան անվանելով «անօրինական նախագահ», «գող», «դահիճ» եւ այլն: Իր պաշտոնակալության ելույթում Բուշն ամերիկացիներին կոչ արեց լինել «խաղաղիներ եւ ոչ թե հանդիսականներ»: Ինքը խոստացավ չմոռանալ թույլերին եւ հիշեցրեց ասվածաշնչյան բարի սամարացու պատմությունը: Բայց նորընտիր նախագահի 14 րոպեանոց ելույթը միայն մեկ անգամ ընդհատվեց ծափահարություններով, երբ նա խոսեց հարկերը կրճատելու մտադրության մասին:

Արարողությունից հետո Բուշը Կոմիսոլիումից Սմիթսկ տուն մեկնեց Փենսիլվանիա պողոտայով: Ճանապարհին նա խուսափում էր մարդկանց մոտենալուց եւ նրանց ձեռքերը սեղմելուց, տեսնելով ամերիկացիների ոչ միանշանակ վերաբերմունքը: Ոմանք ողջունում էին նրան, բայց շատերն էլ դիմավորում էին սուլոցներով, ծաղրական բացականչություններով, լոլիկներ եւ ձվեր էին նետում վրան: Նույնիսկ ամերիկյան դրոշակ այրեցին: «Լիբերասիոն» թերթի թղթակիցը նշում է, որ ամերիկյան հատուկ ծառայությունների աշխատակիցները փորձում էին չափավորել դժգոհի ցուցարարների զայրույթը:

Դժգոհության նման ալիք ԱՄՆ-ում վերջին անգամ եղել էր 1973 թ., երբ նախագահ Ռիչարդ Նիքսոնին ստիպել էին վերջ դնել Վիետնամի պատերազմին: Վերջին հարյուրամյակում Բուշ կրտսերը միակ նախագահն է, որ ընտրվել է ամբողջ երկրում մրցակցից պակաս քվեներ ստանալով: Բայց նորընտիր նախագահն իր ելույթում բնավ չնշեց այդ հանգամանքը: Ցուցարարներին հուզող գլխավոր հարցն այն էր, թե «ինչու պարտվողը հաղթեց»:

ՌՈՅԹԵՐ-ՍՊՈՒՆԿՈՒՆ

Մեկնաբանների ուշադրությունից չվրիպեց նաեւ այն, որ պաշտոնակալության արարողությանը ներկա չէին սեւամորթներ, թեեւ նրանք կազմում են Վաշինգտոնի բնակչության 70 տոկոսը: Շաբաթավերջին CBS հեռուստաընկերության հրապարակած հարցման արդյունքները վկայում են, որ ամերիկացիների միայն 51 տոկոսն է օրինական համարում Բուշ կրտսերի ընտրությունը:

Բուշի առաջին հոգսն իր խաղաղական իշխանության ամրապնդումն է: Ուստի նա գործունեություն սկսեց խորհրդականների ընտրությունից: Ինչ վերաբերում է փոխնախագահի պաշտոնում Դիկ Չեյնիի նշանակմանը, «Ֆիգարո» թերթը նշում է, որ «ծեր աղվեսը» հեղինակություն ունի Կոնգրեսում եւ Սպիտակ տանը: Վաշինգտոնում հայտնի անձինք են նաեւ 7 քարտուղարները (նախարարները)՝ պետքարտուղար Քոլին Փաուելը, գանձապետ Փոլ Օ'Նիլը, պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, գյուղատնտեսության, առեւտրի, կրթության եւ էներգիայի նախարարներ են Վենեմանը, Դոն Էվանսը, Ռոդրիկ Փեյջը եւ Սփենսեր Աբրահամը: Բուշը ջանում է ապացուցել, թե ինքը բավականաչափ ուժեղ է Կալիֆոռնիայի էներգետիկ ճգնաժամը եւ Ուոլ սթրիթում ծագած անկայունությունը հաղթահարելու, պաղեստինա-իսրայելական երկխոսությանը նպաստելու եւ ուրանային զենքի հարցում եվրոպացիներին դիմակայելու համար:

Բուշ կրտսերի բախտը բերել է այն առումով, որ նա էյզենհաուերից հետո առաջին հանրապետական նախագահն է, որի օրոք Կոնգրեսում հանրապետականները մեծամասնություն են կազմում: Բայց Սենատում հանրապետականները միայն մեկ ձայնի առավելություն ունեն, այնպես որ իր որոշումները հանձնիչ դարձնելու համար Բուշն ստիպված կլինի դիմել դեմոկրատների օգնությանը:

Պ. Ռ.

Կանանց հագուստի իրանցի մոդելյորները ցուցադրեցին իրենց «ստեղծագործությունները»

Հունվարի 17-ին Թեհրանում 8-օրյա աշխատանքներն ավարտեց «Երիտասարդներին նվիրված հատուկ ցուցահանդեսը», որը տեղի ունեցավ Իրանի մայրաքաղաքի միջազգային մեծ ցուցահանդեսների կառույցում: Ցուցահանդեսի շրջանակներում կայացավ նաեւ այդ երկրում հեղափոխական շրջանից հետո կանանց հագուստների նորաձեւության առաջին ցուցադրումը: Հանգամանք, որն իր վրա սեւեռեց միջազգային ԶԼՄ-ների եւ այցելուների հոծ բազմության ուշադրությունը, թեեւ խնդրո առարկա տաղավարի մուտքի տոմսերը բավական թանկ են եղել: Սակայն այն, ինչպես կարելի էր ենթադրել, դարձել էր պահպանողականների եւ նրանց հարող մամուլի օրգանների սուր քննադատությունների թիրախը՝ գնահատվելով իսլամական արժեքներին հակասող: Հունվարի 16-ին ընդգծված պահպանողական դիրքորոշմամբ «Քեյհան» օրաթերթը կանանց հագուստների նորաձեւության ներկայացումը որակել է իբրեւ գռեհկության գովազդի միջոց, ընդգծելով, որ այն բնավ չի համապատասխանում Իրանի հասարակության արժեքներին եւ մշակույթին:

Միջազգային ԶԼՄ-ների եւ իրանական մամուլի հաղորդագրությունների համաձայն, 1,5 ժամ տեւողությամբ ցուցադրումը, հաշվի առնելով աննախադեպ լինելը, ակնհայտորեն հաջողված է եղել: Ի դեմ, տղամարդկանց մուտքն այդ տաղավար արգելված էր: Ընդհանուր առմամբ ցուցադրվել են երեք ոճի հագուստներ՝ ավանդական, ավանդաարդիական եւ արդիական, որոնք Իրանի կարուձեւի ուսումնական հաստատությունների ուսանողուհիների մտահղացումների արգասիքն էին: Ավանդական հագուստների բաժնում ցուցադրվել են բանգարանայի «ստեղծագործությունների» նմուշներ, իսկ ավանդա-արդիականում՝ առավելապես առօրյա եւ տարբեր հիմնարկությունների, օրինակ, ավիացիայի համազգեստային ոճի հագուստներ: Արդիական բաժնում ներկայացվել են տոնական հագուստներ, բացի այդ ցուցադրվել են նաեւ նշանդրեքի եւ հարսանյաց զգեստներ, ինչպես նաեւ իսլամական վերնազգեստների (մանտոների) նոր մոդելներ: Նշվում է, որ զգալի էր նաեւ ցուցադրող մանեկենների, բացառությամբ երկու-երեքից, փորձի պակասը:

Անդրադառնալով զգեստների գներին, պետք է նշել, որ այցելուների հաղորդած տվյալների համաձայն ամենաարագ եւ առանց ձեռքի աշխատանքի զգեստները գնահատվել էին մոտավորապես 60–70 դոլար, իսկ ձեռքի աշխատանքներովը՝ շատ դեպքերում ավելի քան 200 դոլար:

Է. Ռ.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Եվրոպացի չինովնիկները Ռուսաստանից պահանջում են հարգել չեչեն ահաբեկիչների իրավունքները

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) խորհրդարանական վեհաժողովը (ԽՎ) հունվարի 22-26-ը կգումարի նոր հազարամյակի առաջին նստաշրջանը: Արդեն երրորդ անգամ ԵԽ ԽՎ աշխատանքներին չի մասնակցի Ռուսաստանի խորհրդարանականների պատվիրակությունը: Անցյալ տարվա գարնանային նստաշրջանում ձայների մեծ տարբերությամբ վեհաժողովը Ռուսաստանին զրկել է քվեարկելու իրավունքից՝ պատճառաբանելով Չեչնիայում շարունակվող հակահաբեկչական գործողությունները: Հունվարի 25-ին, ինչպես տեղեկանում ենք ԵԽ-ից «Ազգի» խմբագրություն ուղարկված ֆաքսից, Չեչնիայում մարդու իրավունքների իրավիճակի շուրջ ելույթ կունենա լորդ Ջադդը, որը գլխավորում է ԵԽ ԽՎ քաղաքական հանձնաժողովը: Ռուսայաց տրամադրություններով հայտնի Ջադդի ելույթից պարզ կլինի՝ ՌԴ ձայնի իրավունքը կվերականգնվի՞, թե՞ ոչ:

ԵԽ ԽՎ աշխատանքները սկսվել են երեկ: Ռուսաստանում մարդու իրավունքների հարգման եւ ազատ մամուլի խնդիրների շուրջ լսումներին հրավիրվել են ՌԴ մամուլի նախարար Լեսինը, ՀՌԲ հեռուստաընկերության տնօրեն Կիսելյովը, ՕՐՏ-ի քաղաքական մեկնաբան Լեոնտեւը, «Ազատություն» ռադիոկայանի ռուսական ծառայության լրագրող Բաբիցկին, զինվորական լրագրող Պասկոն: ԽՍՀՄ առաջին եւ վերջին նախագահ Գորբաչովը եւ «Մեդիա-մոստ» տնօրեն Գուսինսկին ուղարկել են տեսաուղերձ:

Առավելագույն պատիժը, որին կարող է հասնել ԵԽ-ն Ռուսաստանի նկատմամբ, վերջինիս եվրոպական այս կազմակերպությունից վտարումն է, ինչին եվրոպացի լորդերը երբեք չեն գնա: Նման պարագայում ԵԽ-ն այլեւս չի կարող միջամտել Ռուսաստանի ներքին գործերին, այսինքն՝ ռուս զինվորականները առանց եվրոպայից եկող նախազգուշացումների եւ սպառնալիքների կարող են վերջակետին հասցնել չեչեն ահաբեկիչներին բնաջնջելու գործընթացը: «Եվրախորհուրդը մոռացել է, թե ում հետ գործ ունի»: Նման արտահայտություն հաճախ կարելի է լսել ռուս բարձրաստիճան պաշտոնյաների շուրթերից: Կամ՝ «Մենք, որպես անդամավճար, տարեկան 24 մլն դոլար ենք մուծում ԵԽ գանձարան, ավելի նպատակահարմար կլիներ այդ միջոցներն ուղղել Չեչնիայի վերականգնմանը»:

Ռուսաստանն իր երկրի տարածքում պայքար է մղում միջազգային մահմեդական ահաբեկչության դեմ: Եթե, իրոք, ԵԽ-ն իր շարքերից վտարի Ռուսաստանին, ապա կնշանակի, որ ժողովրդավար եվրոպան պաշտպանում է ահաբեկչությունը:

Ի դեմ, ինչպես հաղորդում է չեչենական «Կավկազպրես» գործակալությունը, կիրակի Գուդերմեսում «չեչեն մոջահեդները ոչնչացրել են 22 ռուս զինվորների», իսկ երկուշաբթի գրոհ է կազմակերպվել ռուսների դեմ, այս անգամ Գրոզնիում:

Ռուս-չեչենական երկրորդ պատերազմի ընթացքում չի եղել մի դեպք, երբ ԵԽ ԽՎ-ը դատապարտի չեչենների բարբարոսությունները, նույնիսկ այն դեպքում, երբ գլխատվում են եվրոպացի լրագրողներ, գործարարներ:

ԵԽ ԽՎ այս նստաշրջանում հիմնականում քննարկման թեմա կլինեն Չեչնիայում, Բալկաններում առկա իրավիճակը, Ռուսաստանում, Ուկրաինայում եւ Չեխիայում ազատ մամուլի հետ կապված հիմնախնդիրները: Իսկ հունվարի 25-ին ԵԽ-ն պաշտոնապես իր շարքեր կընդունի Հայաստանին եւ Ադրբեջանին:

Թ. Հ.

Շեւարդնաձեն եւ Պուտինը համատեղ ուժերով կբռնեն Մասխադովին ու Բասաեւին

Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ էդար Շենգելիայի գլխավորած վեցհոգանոց խորհրդարանական պատվիրակությունը հունվարի 21–24-ն աշխատանքային այցով գտնվում է Մոսկվայում՝ քննարկելու ռուս-վրացական հարաբերությունների ներկա վիճակը, երկու երկրների միջեւ այցագրային կարգի հաստատման եւ Վրաստանում ռուսական ռազմակայանների հետ կապված խնդիրները: Վրաց խորհրդարանականները կհանդիպեն ՌԴ Պետդումայի խոսնակ Գենադի Սելեզնյովի, հանձնաժողովների նախագահների, խորհրդարանականների հետ:

Պաշտոնական Թբիլիսին փորձում է ամեն բան անել կարգավորելու ռուս-վրացական հարաբերությունները: Մի քանի օր առաջ Մոսկվա էր ժամանել Վրաստանի ազգային անվտանգության քարտուղար Նուգզար Սաջայան եւ բանակցել իր ռուս գործընկեր Սերգեյ Իվանովի հետ: Քննարկվել է Աբխազիայում եւ Պանկիսկի կիրճում ստեղծված իրավիճակը: Ռուսաստանն ակնարկել է, որ Աբխազիայի հարցում կօժանդակի Թբիլիսիին՝ չմանրամասնելով, թե ինչ ասել է «օժանդակություն»: Փոխարենը Թբիլիսին խոստացել է այլալրջորեն հսկել ռուս-վրացական սահմանի չեչենական հատվածը: Վրաց իրավապահները պարզ տեքստով ասել են, որ կօգնեն Ռուսաստանին՝ Բասաեւին եւ Մասխադովին ծերբակալելու հարցում: Ռուսական գործակալությունների հաղորդագրությունների համաձայն՝ «Մասխադովը եւ Բասաեւը պատսպարվում են Վրաստանում կամ հաճախ են այցելում Վրաստան»:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Քանակցություններ բախումներին զուգընթաց

Մինչ շարունակվում էին պաղեստինա-իսրայելական առճակատումները, հունվարի 21-ին 2 կողմերը վերսկսեցին մարաթոնային բանակցություններ եգիպտական Թաբա հանգուսավայրում՝ նպատակ ունենալով մինչեւ Իսրայելի վարչապետական ընտրությունները փետրվարի 6-ը, հասնել վերջնական կարգավորման սկզբունքների հռչակագրի: Ըստ տարբեր լրատվամիջոցների, հիմք ունենալով ԱՄՆ-ի նախկին նախագահ Քլինթոնի վերջին նախաձեռնությունը, կողմերը փորձելու են հաղթահարել տարաձայնությունները, մանավանդ Երուսաղեմի եւ պաղեստինցի փախստականների վերադարձի փոքր հիմնախնդիրների շուրջ: Որոշ աղբյուրներ հավանական են համարել Իսրայելի վարչապետի պաշտոնակատար Բարաքի եւ պաղեստինյան առաջնորդ Արաֆաթի հետագա մասնակցությունը Թաբայի բանակցություններին, որոնք, այնուհանդերձ, անցկացվում են լրատվական սահմանափակ պայմաններում:

Գաղտնիք չէ, որ այս բանակցությունները Բարաքի համար կարող են դառնալ «փրկության ցանց» ընտրությունների նախօրեին, եթե լուրջ համաձայնություն ձեռք բերվի պաղեստինցիների հետ: Դրանով նա հույս ունի կրճատել հարցումներում արտացոլված այն մեծ տարբերությունը, որ առկա է իր եւ «Լիկուդի» ղեկավար Արիել Շարոնի միջեւ՝ հօգուտ վերջինիս: Թերեւս այս հանգամանքը հաշվի առնելով, իրենք՝ պաղեստինցիները, նախաձեռնեցին Թաբայի եռանդուն բանակցությունները՝ հուսալով նոր «զիջումներ» կորզել Թել Ավիվից:

Ա. Մ.

ԱԶԳ

Մշակույթ

Հատոր նշանավորված հայրապետական գնահատությամբ

Հայոց եկեղեցու պատմության նոր շրջանի եւ Խրիմյան Հայրիկի գործունեության երկու կարեւոր էջերին են նվիրված Սանդրո Բեհբուդյանի աշխատասիրությամբ կազմված «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» շարքի յոթերորդ «Խրիմեան Հայրիկը եւ ցարական բռնատեսութիւնը (1903-1907 թթ.)» հատորում զետեղված նյութերը: Ընդգծելով նրանց այժմեականությունը մեր այսօրվա հասարակական եւ եկեղեցական կյանքի տարբեր հարցերում, մասնաւորապես եւ այս հատորի ընդհանուր հովանավոր Մեսրոպ արք. Աշջյանը գրքի առաջաբանում գրում է. «Հայրիկ, իր վախճանումէն ինսուն եւ աւելի տարիներ յետոյ, աւելի քան կենդանի է: Մեր ժամանակակիցն է, մեր հայրն է, մեր առաջնորդն է, մեր ուղեցոյցն է՝ հաւատի եւ հայրենասիրութեան մեր կեանքին մէջ: Այս առումով ալ, խնդրեցինք արիւագէտ որն Սանդրո Բեհբութեանէն, որ «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան» շարքի է հատորը նուիրէ Խրիմեան Հայրիկին եւ, աւելի ծիշտը՝ Հայրիկի հայրապետական գործունէութեան մէկ ժամանակահատուածին, եւ յատկապէս եկեղեցական կալուածներու գրաւման եւ 1906 թ. «Հայոց պատգամաւորների համագումարին»:

Գրքի հրատարակությունն իրականացել է բարեւարությամբ ամերիկաբնակ Նելլի Երվանդի, ի հիշատակ իր հանգուցյալ ամուսնու՝ Ճան Երվանդ Գույումճյանի:

Ներկայացվող այս վավերագրերի միջոցով այնքան խոսուն ներկայացված է հայության համազգային ընդվզումը Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման 1903 թ. հունիսի 12 որոշման դեմ, որը Նիկոլայ երկրորդը հարկադրված եղավ չեղյալ հայտարարել 1905 թ. օգոստոսի մեկի նոր հրովարտակով: Ավելի քան երկու տարվա այս շարժումը գլխավորում էր ինքը՝ Հայոց Հայրիկը, եւ այս ընդվզումը դարձավ Վասպուրականի Արծվի վերջին թռիչքն ու խոյանքն արդեն Ամենայն հայոց կաթողիկոսության գահի վրա:

Հայոց եկեղեցու դեմ ուղղված այս ոտնձգությունը դատապարտեցին հայ հասարակության բոլոր խավերի եւ հոսանքների ներկայացուցիչները, որոնց խոսքում երեւում է նրանցից յուրաքանչյուրին բնորոշ խառնվածքն ու գործելակերպը, ծայրահեղ ընքոստության եւ անհնազանդության կոչերից մինչեւ առավել զգուշավոր ընթացքին հետեւելը: Հրատարակված հրամանագրի առաջին արձագանքողներից էր Կ. Պոլսի երանաշնորհ Մաղաքիա պատրիարք Օրմանյանը: Այս պայքարին բերած գործուն մասնակցությունում եւս փայլատակում է Օրմանյանի դիվանագիտական ողջ հանճարը, որի խոսուն արտահայտությունն է հատորի հատկապես թիվ 103 վավերագիրը:

Ռուսաստանի դեսպան Զինովեւին ուղղված այս գրությունում Օրմանյանը շեշտում է ռուսաց պետությանը հայերի մատուցած ծառայությունները եւ հավատարմությունը, այնուհետեւ ասում է, թե ցարական հրամանագիրը ոչ միայն անարդար է, այլեւ իրավական առումով եւս պատճառաբանված չէ ու վնասում է Ռուսաստանի քաղաքական շահերին, քանի որ այն շատ վատ են ընդունել ողջ աշխարհով սփռված հայերը: Այսպիսով, Օրմանյանը դեռեւս մինչեւ Հայոց մեծ եղեռնը եւ սփյուռքի ծեւավորումը, շեշտում է աշխարհասփյուռ հայության ունեցած ուժը, որն անտեսելը ցանկալի հետեւանքների չէր կարող հանգեցնել:



Այս վավերագրերը նաեւ ցույց են տալիս, թե ինչ կազմակերպված կառույց էր դարձել Հայոց եկեղեցին իր կենտրոնածիգ հոգեւոր իշխանությամբ, որում քահանայից մինչեւ թեմական առաջնորդներն ու ժամանակի Պոլսի հռչակված Օրմանյան պատրիարքը ոչ մի ինքնուրույն քայլ չէին կատարում առանց Հայոց եկեղեցու ծերունազարդ գահակալի գիտության:

Հրատարակվող նյութերը կարեւորվում են նաեւ Արեւելյան Հայաստանի, Կովկասի եւ Ռուսաստանի հայության սոցիալ-տնտեսական հարաբերությունների եւ պատմության տեսանկյունից, քանի որ տպագրվող զեկուցագրերում, որոնք ներկայացնում են եկեղեցական համայնքների, թեմերի ու Ամենայն հայոց կաթողիկոսության ունեցվածքի հաշվառման ցուցակները, ցույց են տալիս տնօրինվող միջոցները եւ ունեցվածքը՝ հնարավորություն ընձեռելով պատկերացում կազմել այդ վայրերի հայության նյութական միջոցների ու հնարավորության մասին:

Գրքի երկրորդ մասը, ինչպես ասացինք, նվիրված է 1906 թ. օգոստոսի 16-29-ին Մայր աթոռում գումարված ռուսահայոց պատգամավորական ժողովին, որը հրավիրվել էր Խրիմյանի նախաձեռնությամբ եւ արտահայտությունն էր Հայոց Հայրիկի ժողովրդավարական հայացքների եւ ոգու: Համագումարի նյութերում լավագույնս արտացոլվել են եկեղեցի-հասարակություն հարաբերություններին եւ Հայոց եկեղեցու մեր ազգային կյանքում գրավելիք տեղին ու դերին նվիրված հարցերը՝ դիտարկված դարասկզբի հայ քաղաքական տարբեր կուսակցությունների, հոսանքների եւ ընթացքների տեսանկյունից:

Վերջում ավելացնենք, որ այս հատորի հրատարակությունը համընկավ նրա անխոնջ աշխատասիրող Սանդրո Բեհբուդյանի գիտաարխիվային գործունեության 40-ամյակին: Ի գնահատություն հեղինակի գիտամանկավարժական արդյունաբեր գործունեության, որը մեծաթես կապված է Ս. էջմիածնի հետ եւ ի նշանավորումն այս հոբելյանի, Սանդրո Բեհբուդյանին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի սրբատառ կոնդակով շնորհվեց Հայոց եկեղեցու Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանը:

Հայոց եկեղեցու 18-19-րդ դարերի պատմությունը, եթե մեծաթես գրվել է կաթողիկոսական դիվանի հիման վրա, ապա 20-րդ դարինը գրավելու է գլխավորաբար այս վավերագրերի հիման վրա եւ Սանդրո Բեհբուդյանին մաղթենք աշխատանքային նոր կորով եւ առողջություն վավերագրերի հրատարակության այս դժվարին գործում, որով կազմվելու է Հայոց եկեղեցու այս շրջանի պատմության ատաղձը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎԵՐԻՉՅԱՆ

ԱՄԵՆ ՈՒՐԲԱԹ

Բրամս եւ Բրուքներ «Արամ Խաչատրյան» համերգասրահում

Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի 2001 թ. հերթական համերգը տեղի ունեցավ հունվարի 19-ին: «Արամ Խաչատրյան» համերգասրահում նվագախումբը գլխավոր դիրիժոր էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ հանդիսակների ուշադրությանը ներկայացրեց Յոհաննես Բրամսի թիվ 1 կոնցերտը դաշնամուրի եւ նվագախմբի համար եւ Անտոն Բրուքների «Սիմֆոնիա թիվ 4» («Ռոմանտիկական»):

Երաժշտասեր հանդիսականը ջերմությամբ ընդունեց Բրամսի կոնցերտը նվագախմբի հետ երիտասարդ, տաղանդավոր երաժիշտ Արեգ Սիմոնյանի դաշնամուրային մեկնաբանությունը, որը նվագախմբի հետ կատարել է նաեւ Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Շումանի, Գրիգի, Ռախմանինովի լավագույն ստեղծագործությունները՝ արժանանալով երաժշտագետների եւ հանդիսականի ուշադրությանը: Արեգ Սիմոնյանն ավարտել է Երեւանի Չայկովսկու անվան ՄՄԵԴ-ը, ապա սովորել Կոմիտասի անվան կոնսերվատորիայում եւ ասպիրանտուրայում: Մենահամերգներով հանդես է եկել Վրաստանում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում: Միայն անցած տարի մասնակցել է մի շարք համերգների Շվեյցարիայում, Մեքսիկայում, Գվատեմալայում, Կոստա Ռիկայում: Արեգ Սիմոնյանն արժանացել է մի շարք մրցանակների՝ ՀԶՄ-ի հայտարարած՝ Շումանի (1993 թ.) եւ Գրիգի (1994 թ.) կոնցերտների լավագույն կատարման համար, ինչպես նաեւ դաշնակահարների՝ Էլմասի անվան հանրապետական, Իտալիայի «Ybla Crand price» միջազգային մրցույթների:

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ

Ասպետի կոչում Սփիլբերգին

Ասոշիեյթեդ պրես գործակալության լրատվության վրա հենվելով, կիպրական «Սայփրս Ուիքլի» շաբաթաթերթն իր հունվարի 5-11 համարում հաղորդում է, որ հունվարի 29-ին Վաշինգտոնում Անգլիայի դեսպան սըր Քրիստոֆեր Մեյերի ձեռամբ աշխարհահռչակ կինոռեժիսոր Սթիվն Սփիլբերգն ստանալու է ասպետի կոչում՝ վերջին 25 տարիների ընթացքում ընդհանրապես կինոարտադրության եւ մասնավորապես բրիտանական կինոարվեստի ասպարեզում իր ունեցած նշանակալի ներդրումի եւ մատուցած ծառայությունների համար: Նրա ֆիլմերի ցուցակում առանձնահատուկ տեղ են գրավում «Շինդլերի ցուցակը», «Այլմոլորակայինը», «Փրկելով շարքային Ռայանին», «Յուրայի ժամանակաշրջանի արգելանոցը» եւ «Կորուսյալ աշխարհ» ֆիլմերը:

Լուրի հաղորդման ժամանակ Սփիլբերգն արձակուրդում է եղել, բայց նրա խոսնակը «Դրիմուորքս» ընկերությունում նշել է, որ «մեծաթես շոյված եւ զգացված է: Նա միշտ էլ մեծ հարգանք է ունեցել Մեծ Բրիտանիայի եւ նրա կինոարվեստի նկատմամբ»:

Սփիլբերգը տրանից հետո իր անունից հետո կարող է ավելացնել KBE տառերը, որոնք նշանակում են «Բրիտանական կայսրության Ասպետ»:

Հ. Ծ.

ԹԱՆԿԱՐԺԵՏ ԱՇՔԵՐՈՎ

Թանկարժեք գրադարան

ԿԻՆՈԱՇԽԱՐՀ

«Գլադիատորն» ու «Տրաֆիկը» գլխավորում են ցուցակը

Հունվարի առաջին իսկ օրերին Բեւերլի Հիլզում հայտնի են դարձել 2000 թ. լավագույն ֆիլմերի «Գոլդն գլոբ» մրցանակի թեկնածության առաջադրումները: Ցուցակն, ըստ «Սայփրս Ուիքլի» կիպրական շաբաթաթերթի հունվարի 5-11-ի համարի, գլխավորում են «Գլադիատոր»՝ հռոմեական պատմության էպիկական եւ «Տրաֆիկ»՝ թմրադեղերի առեւտրի մասին ողբերգական ֆիլմերը:

«Գլադիատորի» թեկնածությունը առաջադրվել է հինգ՝ լավագույն ֆիլմ, լավագույն դերասան (Ռասել Կրոու), երկրորդական դերի լավագույն կատարում (Ջոակին Ֆինիխ), լավագույն ռեժիսոր (Ռիդլի Սկոթ) եւ լավագույն երաժշտություն կատեգորիաներում:

«Տրաֆիկը» նույնպես ստացել է թեկնածության հինգ առաջադրում՝ լավագույն նկար, երկրորդական դերի լավագույն կատարումներ (Կատրին Զիտա-Ջոնս եւ Բենիցիո դել Տորո), լավագույն սցենար (Սթիվն Գաղան) եւ լավագույն ռեժիսոր (Սթիվն Սոդերբերգ) կատեգորիաներում:

Սոդերբերգը լավագույն ռեժիսորի թեկնածու է առաջադրվել նաեւ «Էրին Բրոկովիչ» ֆիլմի համար, որը «Բիլլի Էլիոտ», «Սանշայն», «Ուոնդեր Բոյզ» ֆիլմերի հետ ստացել է լավագույն ֆիլմի թեկնածության առաջադրում:

Լավագույն երաժշտական եւ կատակերգական ֆիլմերի ցուցակում թեկնածուներ են գրանցվել «Օլմոս Ֆեյմը», «Բետ հի տոու», «Չիկն Ռան», «Շոկոլա» եւ «Օ Բրադեր, Ուեր արտ դաու» ֆիլմերը:

Լավագույն դերասանուհի տիտղոսին առաջադրվել են Ջոան Ալենը («Մրցակցողը»), Բյորկը («Մթնում պարողը»), Էլեն Բըրստինը («Ռեվիեմ երազի համար»), Լորա Լիննին («Կարող ես հույսդ դնել ինձ վրա») եւ Ջուլիա Ռոբերտսը («Էրին Բրոկովիչ»):

Իսկ լավագույն դերասանի տիտղոսին, Կրոուից բացի, առաջադրվել են Խավիեր Բարդեմը («Նախքան մութն ընկնելը»), Մայքլ Դուգլասը («Հրաշք տղաները»), Թոմ Հենքսը («Դեն գցվածը») եւ Ջեֆրի Ռաշը («Փեսուրներ»):

Երաժշտական եւ կատակերգական ժանրի լավագույն դերասանուհիների ցանկում են Ժյուլիետ Բինոշը («Շոկոլա»), Բրենդա Բլեթինը («Փրկելով Գրեյսին»), Սանդրա Բուլոկը («Միսս Ազգակցություն»), Տրեյսի Ուլմանը («Կեսգիշերային խաբեբաները») եւ Ռենի Զիլուեգրը («Քույր Բեթթին»), իսկ լավագույն դերասանի ցանկում՝ Ջիմ Կարին, Ջորջ Քլունին, Ջոն Կյուսաքը, Ռոբերտ Դե Նիրոն եւ Մել Գիբսոնը:

Օսար ֆիլմերից առաջադրվել են «Կռացած վագրը, թաքնված վիշապը» (Չինաստան), «Ամորես Պերոս» (Մեքսիկա), «Հարյուր ասպիճաններ», «Մալենա» (Իտալիա) եւ «Սբ. Պիեռի այրին» (Ֆրանսիա) կինոնկարները:

Ավելացնենք, որ թեկնածությունները առաջադրվել են կինոասոցիացիայի մոտ 90 անդամների կողմից եւ որպես կանոն արտացոլում են առաջիկայում «Օսկարի» թեկնածությունները:

Հ. Ծ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱՑԱՐԵՑ

Հունվարի 23

Հայոց տոմարի Արաց ամսի Ծմակ օրը

Ծնվել են՝

- Օսվալդ Բալցերը (1858 թ.), իրավունքի լեհ պատմաբան («Հայկական դատավարությունը միջնադարյան Լվովում», «1519-ին Սիգիզմունդ 1-ինի հաստատած հայկական կանոնադրությունը»):
- Սարգիս Կուկունյանը (1863 թ., Ադրբեջան, գ. Նիժ, 1913 թ., Օրյուի բանտ), ազգային-ազատագրական շարժման գործիչ:
- 1887 թվականի այս օրը ծնվել է էստոնացի մանկավարժ Բյուլ Հեդվիգը (միսս Բյուլ մայրիկը): Սկսած 1909 թ. Ադանայի ջարդերից, զբաղվել է հայ գաղթական որբերի, կանանց ու աղջիկների խնամով:
- 1894 թվականի նույն օրը ծնվել է ռուսագետ-լեզվաբան, մանկավարժ, բառարանագիր պրոֆեսոր Ստեփան Բարխուդարովը: «Ժամանակակից գրական ռուսաց լեզվի» բառարանի ստեղծմանը մասնակցելու համար արժանացել է լենինյան մրցանակի:
- Միքայել (Մայքլ) Արսլանը (1904 թ.), իտալացի հայազգի բժիշկ պրոֆեսոր, անվանի բժիշկ Երվանդ Արսլանի որդին: Եղել է Բրիտանական թագավորական ընկերության իսկական անդամ, պարգեւատրվել է ֆրանսիական «Պատվո լեգեոն» շքանշանով, իտալական հանրապետության առաջին կարգի մեդալով:
- Կարպ Խաչվանքյանը (1923 թ., Ախալցխա, 1998 թ., Երեւան), ՀՀ ժող. արտիստ, դերասան, ռեժիսոր:

Տարեգրության այս օրը՝

- 1912 թ. բացվել է Երեւանի ջրմուղը:
- 1921 թ. տեղի է ունեցել Երեւանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացումը (1923 թ.-ից՝ պետական համալսարան):
- 1932 թ. բացվել է Հայաստանի կոմունիստական համալսարանը:

ՀԵՂԻՆԵ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Հաղթանակ եւ պարտություն

Մոսկվայում ընթանում է «Համագործակցության չեմպիոնների գավաթի» 9-րդ խաղարկությունը:

Մրցումների մասնակից 16 թիմերը բաժանվել են երկու մասի՝ բարձրագույն եւ առաջին լիգաների, որոնք էլ իրենց հերթին բաժանված են երկու մասի:

Առաջին լիգայում «D» խմբում է հանդես գալիս Հայաստանի չեմպիոն «Արաֆ-Իմոթեֆ» թիմը: Արարատի ֆուտբոլիստներն առաջին խաղում հանդիպեցին Ղազախստանի չեմպիոն «Ժենիսի» հետ: Առաջին խաղակեսն ընթացավ մեր ֆուտբոլիստների առավելությամբ: Նախավերջին րոպեին Արա Հակոբյանը երկու անգամ գրավեց ղազախական թիմի դարպասը: Երկրորդ խաղակեսում ավելի գերադասելի էին մրցակիցների հնարավորությունները, որոնք ընդմիջումից 15 րոպե անց պատասխան գոլը խփեցին: Խաղն այդպես էլ ավարտվեց 2-1 հաշվով:

Երկրորդ տուրում «Արաֆ-Իմոթեֆի» մրցակիցն էր հաշվարկից դուրս հանդես եկող Ռուսաստանի երիտասարդական հավաքականը: Հանդիպումն սկսվեց հայ ֆուտբոլիստների գրոհներով: Խաղասկզբում ռուսաստանցիներն իրենց տուգանային հրապարակում խախտեցին կանոնները, եւ Հայկ Հակոբյանը 11 մ տուգանային հարվածով բացեց հաշիվը: Շուտով մրցակիցները հավասարեցրին հաշիվը, բայց Հայկ Հակոբյանը կրկին առաջ մղեց իր թիմին: Առաջին խաղակեսի վերջին րոպեներին Ռուսաստանի երիտասարդական հավաքականի ֆուտբոլիստները կարողացան 2 գնդակ խփել «Արաֆ-Իմոթեֆի» դարպասը: Երկրորդ խաղակեսում հաշիվը չփոխվեց: 89-րդ րոպեին Հայաստանի չեմպիոնը կրկին 11 մ հարվածի իրավունք ստացավ: Գնդակին մոտեցավ Հայկ Հակոբյանը: Նա կարող էր հեթ-տրիկի հեղինակ դառնալ եւ ոչ-ոքի պարգեւել իր թիմին: Ավա՜ղ, չհաջողվեց... «Արաֆ-Իմոթեֆը» խաղադաշտը թողեց պարտված՝ 2-3:

ՌՈՒԶԵՐ-ԱՐՄԵՆՐԵՍ

Ներկայացնենք գավաթի խաղարկության մյուս հանդիպումների արդյունքները. «A» խումբ- «Սպարտակ» (Ռուսաստան)-«Սլավիա» (Բելառուս) 3-1, «Կաունաս» (Լիտվա)-«Վարզոբ» (Տաջիկստան) 2-0, «Սպարտակ»-«Կաունաս» 2-0, «Սլավիա»-«Վարզոբ» 1-1, «B» խումբ- «Դինամո» (Ուկրաինա)-«Կոպետդաղ» (Թուրքմենստան) 1-1, «Սկոնտո» (Լատվիա)-«Զիմբրու» (Մոլդովա) 2-2, «Սկոնտո»-«Դինամո» 1-0, «Զիմբրու»-«Կոպետդաղ» 1-0, «C» խումբ- «Տորպեդո» (Վրաստան)-«Ժաստիկ» (Ղրղզստան) 3-0, «Շամկիր» (Ադրբեջան)-«Դուստլիկ» (Ուզբեկստան) 1-1, «Տորպեդո»-«Շամկիր» 2-1, «Դուստլիկ»-«Ժաստիկ» 7-0, «D» խումբ- Ռուսաստանի երիտ. հավաքական-«Լեւադիա» (Էստոնիա) 4-2, «Ժենիս»-«Լեւադիա» 1-1:

Այսօր բոլոր խմբերում կանցկացվեն երրորդ տուրի խաղերը: «Արաֆ-Իմոթեֆի» մրցակիցն է Էստոնիայի չեմպիոն «Լեւադիան»:

ՇԱԽՄԱՏ

Աշխարհի թիմային առաջնությունը՝ Երեւանում

2001 թվականի հոկտեմբերի 11-21-ը Երեւանում անցկացվելու է աշխարհի 5-րդ թիմային առաջնությունը:

Մրցումներում հանդես են գալու աշխարհի տասը խոշորագույն շախմատային տերությունները՝ համաշխարհային օլիմպիադայի մրցանակակիրները, աշխարհամասերի առաջնությունների հաղթողները: Մասնակիցների թվում, իհարկե, կլինի նաեւ Հայաստանը, որն այդ պատվին արժանացել է եւ որպես կազմակերպիչ երկիր, եւ որպես Եվրոպայի չեմպիոն:

Հայտնի է դարձել, որ աշխարհի թիմային առաջնության հոգաբարձուների խորհուրդը կգլխավորի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մերժ Սարգսյանը:

Պայքարն ավելի է արվում

Յոթ տուր է անցկացվել հոլանդական Վեյկ ան Զեեի «Կորուս» գերմրցաշարում:

Մրցաշարային աղյուսակը շարունակում է միանձնյա գլխավորել Ալեքսեյ Շիրովը (Իսպանիա), որը վեցերորդ եւ յոթերորդ տուրերում վաստակեց եւս 1,5 միավոր: Նա նախ պարտության մատնեց Լուկ վան Վելիին (Հոլանդիա), ապա խաղաղ դաշինք կնքեց Մայքլ Ադամսի (Անգլիա) հետ: Առաջատարից ընդամենը կես միավորով են ետ մնում հաղթողի կոչման հիմնական թեկնածուներ Գարրի Կասպարովը եւ Վլադիմիր Կրամնիկը: Ռուսաստանի ներկայացուցիչները եւս վերջին երկու տուրերում առաջ շարժվեցին 1,5 միավորով: Հաշվի առնենք, որ մրցաշարի երկրորդ կեսում Շիրովին ավելի ուժեղ մրցակիցներ են սպասում: Ետ է մնում մրցաշարի գլխավոր ֆավորիտներից մեկը՝ Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան): Հավանաբար, նա հույսը դրել է բարենպաստ վերջնագծի վրա:

Յոթ տուրից հետո մասնակիցների արդյունքներն այսպիսին են. 1. Շիրով՝ 5,5, 2-3. Կասպարով, Կրամնիկ՝ 5-ական, 4. Մորոզեւիչ՝ 4,5, 5-6. Անանդ, Ադամս՝ 4-ական, 7. Իվանչուկ՝ 3,5, 8-10. Լեկո, Թիման, վան Վելի՝ 3-ական, 11-12. Թոփալով, Ֆյոդորով՝ 2,5-ական, 13. Պիկետ՝ 2, 14. Տիվյակով՝ 1,5 միավոր:

Կարող էին ավելի լավ խաղալ

Լինարեսում ավարտվեց ավանդական, թվով 8-րդ «Անիբալ» մրցաշարը: 149 մասնակիցների թվում էին մեծ թվով միջազգային գրոսմայստերներ ու վարպետներ:

Շվեյցարական մրցակարգով, 11 տուրով անցկացված միջազգային մրցաշարում առաջին-երկրորդ տեղերը բաժանեցին գրոսմայստերներ Զուրաբ Ասուրուան (Վրաստան) եւ էթիեն Բաֆրոն (Ֆրանսիա), որոնք 8,5-ական միավոր վաստակեցին: Ավելի բարձր էին Ասուրուայի լրացուցիչ ցուցանիշները, որին եւ շնորհվեց գլխավոր մրցանակը: Նշենք, որ սա վրաց շախմատիստի արդեն երկրորդ հաղթանակն է այս տարում:

Մրցաշարին մասնակցում էին նաեւ Հայաստանի 6 ներկայացուցիչներ: Վլադիմիր Հակոբյանն ու Աշոտ Անասյանը վաստակեցին 7-ական միավոր, Գաբրիել Սարգսյանը՝ 6,5, Արտաշես Մինասյանն ու Տիգրան Նալբանդյանը՝ 6-ական, Դավիթ Կարաքորոսյանը՝ 5 միավոր: Իհարկե, մեր առաջատարներից ավելի բարձր արդյունքներ կարելի էր ակնկալել:

Մրցաշարի մասնակիցների մեծ մասը, եւ նրանց թվում՝ նաեւ մեր շախմատիստները, անմիջապես տեղափոխվեցին Իսպանիայի մեկ այլ քաղաք՝ Ուբեդա, որտեղ մեկնարկեց հերթական մրցաշարը: Հուսանք, որ Հայաստանի ներկայացուցիչներն այստեղ ավելի հաջող հանդես կգան:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Բուդդիզմ: 2. Թովմասյան: 3. Հրաս: 4. Սաֆի: 7. Նազարեթ: 9. Քրիստոնեություն: 10. Առաքյալ: 11. Սուսա: 12. Կանթեղ: 13. Պաշտամունք: 16. Դախտավարդ: 21. Եվգենյա: 22. Կրոն: 23. Դանայա: 24. Աստվածածին: 25. Աղանդ: 26. Դիմաղաչեր: 28. Սահական: 29. Քրիստոս: 31. Տիր: 33. Աղոթատեղի: 34. Մոռ: 36. Շարական: 40. Վահագն: 42. Խորալ: 43. Ջաղիկ: 47. Երուսաղեմ:

Հորիզոնական

1. Բեթղեհեմ: 5. Դավանանք: 6. Շիվա: 8. Սաֆո: 10. Ադամ: 14. Արիստակես: 15. Ակնթարթ: 17. Ոսֆ: 18. Տրեբ: 19. Եհովա: 20. Անթիլիաս: 24. Աղանդավոր: 27. «Հուշամատյան»: 30. Նանե: 32. Բուդդայական: 35. «Մաշտոց»: 37. Պրուս: 38. Առամազդ: 39. Ազատ: 41. Արամ: 44. Ակամա: 45. Էրատո: 46. Մասրենի: 48. Լուսավորիչ: 49. Նոյ: 50. Ֆանատիկոս:



Ուղղահայաց

1. Քաղաք Արեւմտյան Հայաստանում, այնուհետեւ Արեւելյան Հայաստանում հիմնադրվեց նույնանուն քաղաք: 2. Սովետական ֆիզիկոս, մշակել է տիեզերական ռադիոճառագայթների մագնիսաարգելակման եւ տիեզերական ճառագայթների առաջացման ռադիոաստղագիտական տեսությունները: 3. Պետություն Հնդկաչին թերակղզու հյուսիս-արեւմուտքում: 4. Հռոմեական կայսր Ներոնից հետո: 5. Հռոմեական կայսր 37 թ.-ից: 6. Երաժշտական ստեղծագործության կոլեկտիվ կատարումը ղեկավարող անձ: 9. Սննդում օգտագործվող ողջ ուտելիքը: 10. Բարձրագույն նոպատակ, որին ձգտում են մարդիկ: 16. Արեւելյան համեմունք: 17. Արեւելյան պոեզիայում տարածված բանաստեղծական ձեւ: 21. Սովետական գիտնական, նրա ղեկավարությամբ են ստեղծվել «Վոստոկ», «Վոսխոդ» տիեզերանավերը, «Կոսմոս» շարքի շատ արբանյակներ: 23. Մահապատիժը իրագործելու սարք, որն առաջին անգամ կիրառվել է Ֆրանսիայում: 24. Նրա կարգավիճակը ծաղրածու լինելն էր: 25. Նահանգ ԱՄՆ-ում: 26. Գյուղ Հայաստանում, Հրազդան գետից հարավ: 27. Տղամարդու անուն: 31. Հիշածին կառույց: 32. Բոստանային կուլտուրա, համեմունք:

Հորիզոնական

7. «Հարավամերիկյան տարբերակ» վեպի ռուս հեղինակը: 8. Հայաստանում գործող մշակութային-գովազդային ընկերություն: 11. Օսմանյան կայսրությունում 1839-1870-ական թթ. ընդունված առաջադիմական բարենորոգումների անվանումը: 12. Ռուս խստադային երգիչ, ասող: 13. Սողունների ընդհանուր անվանումը: 14. Փողոց Մոսկվայում: 15. Էլեկտրականության քանակի միավորը: 18. Նոյն իր տաղանից առաջինն այս թռչունին արձակեց: 19. Մ. Գորկու հերոսը ... Չուդրա: 20. Տաղաչափության մեջ 8 տողից բաղկացած բանաստեղծական տուն: 22. Ցռան մականունով հերոս: 28. Աղեխորշավոր պարզագույն կենդանի: 29. Հերոս «Բոռ» վեպում: 30. Լեռնաշղթա Եվրոպայում: 33. Ռուս ֆիմիկոս: 34. Ասիանգյան թագավորության հիմնադիրը մ.թ.ա. 673-ից: 35. Հերոս «Տախտ-տախտ» կատակերգությունում: 36. Ամերիկյան կինոյի դարբնոցը:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ 2000 Թ. IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ՃՇՏՈՒՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 4

Հայներարտբանկի դրամական հոսքերի վերաբերյալ

	30/09/00	31/12/00 (հազ. դրամ)
Անվանումը		
1. Դրամական հոսք գործառնական գործունեությունից	274,580	(107,385)
2. Դրամական հոսք ներդրումային գործունեությունից	821,055	636,789
3. Դրամական հոսք ֆինանսական գործունեությունից	(3,437,630)	(449,848)
Դրամական միջոցների զուտ աճ	(2,341,995)	79,556
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի սկզբում	3,312,162	970,167
Դրամական միջոցներ ժամանակաշրջանի վերջում	970,167	1,049,723

Գլխավոր տնօրեն Բ. Ասատրյան

Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն Գ. Թաքումյան

ՏՈԼՅԱՏԻ

Գնդակահարել են Ռուսաստանի չեմպիոն Օնիկ Արշակյանին

ՄՈՍԿՎԱ, 22 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տոլյատիում պատվիրված աղմկալից սպանություն է կատարվել: Չորեքշաբթի երեկոյան մարդասպանները գնդակահարել են Ռուսաստանի ոտրոֆեսիոնալ բոնցֆամարտի չեմպիոն Օնիկ Արշակյանին: Սպանության մանրամասներին ծանոթացնում է «Նեզավիսիմայա գազետա» թերթը: 24-ամյա Օնիկ Արշակյանը հանդես էր գալիս Տոլյատիի «Ֆորոդոս» արտադրական միավորման ախատակիցների թիմի կողմից: Անցյալ տարվա դեկտեմբերին նա Ռուսաստանի բոնցֆամարտի չեմպիոն էր դարձել մինչեւ 57 կիլոգրամ քաշային կարգում: Այս տարի Արշակյանը պետք է փոխադրվեր հաջորդ քաշային կարգ: Նա չէր թաքցնում, որ երազում է աշխարհի չեմպիոն դառնալ: Օնիկ Արշակյանն սպանվել է երեկոյան, մոտավորապես ժամը 8-ին, այն տանը գտնվող բարում, որտեղ աշխատում էր մարզիկը: Արշակյանի վրա 26 փամփուշտ էր արձակվել, ընդ որում 16-ը՝ թիկունքին:

Օպերատիվ ախատողներն այդ սպանությունը չեն կապում Արշակյանի մարզական կարիերայի հետ: Ամենից հավանականն այն է, որ հիմնականը կլինի սպանության առեւտրական ասատի վարկածը: Արշակյանը ինքնաշարժերի բիզնեսով զբաղվող «Կառե» ֆիրմայի ղեկավարներից մեկն էր: Ընդ որում այդ ընկերության տնօրենն Օնիկի հայրն էր: Տոլյատիում «Կառե» ֆիրման կապում են հանրահայտ քրեական հեղինակության Վլադիմիր Կարապետյանի (Վովա Արմյանի) անվան հետ, որն սպանվել էր անցյալ տարվա մայիսին: Իսկ ամռանը մահափորձ էր կատարվել Օնիկ Արշակյանի հոր դեմ: Օպերատիվ ախատողները չեն բացառում, որ մարզիկի սպանությունը լինի «Կառե» ֆիրմայի բիզնեսի հետ կապված բախման հանգուցալուծումը:

Հունվարի 28-ից հետո սպասվում է ջերմացում

ԵՐԵՎԱՆ, 22 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ հիդրոօդերեւութաբանության վարչության կանխատեսումների համաձայն, հունվարի 23-24-ին հանրապետության արեւելյան շրջաններում սպասվում են ձյան տեսքով տեղումներ, լեռնային շրջաններում քամու ուժեղացում: Հունվարի 26-27-ին կդիտվի առանց տեղումների եղանակ, որի ընթացքում ջերմաստիճանը աստիճանաբար կնվազի՝ Արարատյան հովտում հասնելով մինչեւ -10 աստիճանի: Ջերմաստիճանի բարձրացում սպասվում է հունվարի 28-ից հետո: Երեւանում հունվարի 23-ին կդիտվի առանց տեղումների եղանակ: 24-ին եւ 25-ին հնարավոր է ձյուն, որի ժամանակ ջերմաստիճանը գիշերը կլինի -3, -5, ցերեկը՝ -1, +1 աստիճան, 27-28-ին՝ նույնպես առանց տեղումների եղանակ, որի ժամանակ գիշերը՝ 3-5, ցերեկը՝ 1-3 աստիճան ցուրտ: Ըստ ՀՀ հիդրոօդերեւութաբանության վարչության մասնագիտացված ստորաբաժանումների կենտրոնի տեղեկատվության, անցած շաբաթվա սկզբին տեղացած ձյան ծածկույթի բարձրությունը Աղարանում կազմել է 43 սմ, Հրազդանում՝ 22, Աբովյանում՝ 23, Ամասիայում, Մասրիկում՝ 20 սմ:

ԼՈՒԾԱՐԿՈՒՄ Է

«Արտիզ» ՍՊԸ-ն գրանցված Մասիսի պետռեգիստրում, վկայականի համարը՝ 01Ա009731, գրանցման համարը 7711000187, 06.06.95 թ.:

USAID

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը եւ

Քեմոնիքս ինտերնեշնլը

հրավիրում են

Իրավական թեմաներով գրող լրագրողներին

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ տույժերը եւ դրանց բողոքարկումը»

թեմայով սեմինարին, որը տեղի կունենա չորեքշաբթի, **2001 թ. հունվարի 24-ին, ժամը 11:00–13:00**

Խոսնակներն են՝

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ **Գեւորգ Դանիելյանը**,

Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դոցենտ, իրավագիտության թեկնածու **Ռաֆայել Եղյանը**

Սեմինարը տեղի կունենա
Քեմոնիքս ինտերնեշնլի
հայաստանյան մասնաճյուղի
գրասենյակում
հետեւյալ հասցեով՝
Հայաստան, Երեւան 375019
Պուշկին փող., 1-ին նրբանցք, տուն 32
Հեռ.՝ (3741) 54 51 21,
54 52 22, 27 33 01
էլ. փոստ՝ **cmonic@arminco.com**



The Embassy of the United of America has a vacancy for a ***Supply Supervisor***. This vacancy is open to nationals of the Republic of Armenia. Candidates must submit a detailed resume or an "Application for Fedetal Employment" (SF-171), or an "Optional Application for Federal Employment" (OF-612) which are available from the American Embassy guard's office located at #18, Marshal Bagramian street. All applications must be received ***before January 26, 2001.***

QUALIFICATIONS:

- Completion of secondary school is required;
- Level III (good working knowledge) of English is required;
- Three years of progressively responsible experience in supply or a closely related field, at least two years should have been with the U.S. embassy or an associated agency;
- Ability to organize, manage, and supervise work;
- Must have strong command of US Word, Excel or Access, and Outlook.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի IDF դրամաշնորհով իրականացվող «Մշակութային ժառանգության համար նախաձեռնության» ծրագրի շրջանակներում

ՇՐՋԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

տեղի համար

Ներկայացվող պահանջներ.

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը՝ հինգ տարվա աշխատանքի փորձ կառավարական, ոչ կառավարական եւ/կամ միջազգային կազմակերպություններում
- Գրավոր եւ բանավոր հայերենի եւ անգլերենի գերազանց իմացություն
- Ձեկուցման նախագիծ եւ դրամաշնորհի առաջարկներ կազմելու իմացություն
- Վարչական եւ կազմակերպչական գերազանց ունակություն
- Մարդկանց հետ շփման եւ հաղորդակցման գերազանց ունակություն

Փաստաթղթերի (CV) ներկայացման վերջին ժամկետը 2001 թ. փետրվարի 5-ն է:
Երեւան, Կառավարական 3-րդ մասնաշենք, հեռ.՝ 521505, 526474

YEREVAN-PARIS-LYON
SABERATOURS-SEVAN
ՍԱԲԵՐԱՏՈՒՐ–ՍԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ–ՓԱՐԻԶ–ԼԻՈՆ

Ավիատոմսեր եւ տուրիզմ

«Սաբերատուր-Սեւան»
ճամփորդական գործակալությունն առաջարկում է.

- ***Ավիատոմսեր Երեւանից ուղիղ չվերթերով***

ARMENIAN AIRLINES · swissair · KLM · BRITISH AIRWAYS · АЭРОФЛОТ

տրանզիտ թռիչքներով ցանկացած ուղղությամբ եւ ընկերությամբ: Փարիզի օդանավակայանում Ձեզ կդիմավորի մեր գրասենյակի ներկայացուցիչը եւ կհոգա Ձեր բոլոր հոգսերը՝

- ***Գնացքի տոմսեր Եվրոպայում***
- ***Հյուրանոցների ամրագրում Հայաստանում եւ արտասահմանում***
- ***Բժշկական ապահովագրություն***

375010, ք. Երեւան, Վարդանանց 10
Հեռ. (374 1) 52 54 48, 52 85 48, ֆաքս (374 1) 56 40 30
E-mail: sabera@arminco.com

Աշնան տուրիզմի հաստատության 30 եւ Կիպրոսի հետ համագործակցության 25-ամյակի եւ Սուրբ Վալենտինի առիթներով 2001 թ. փետրվարի 14–21-ը կազմակերպվում է բացառիկ տուր Կիպրոս:

Բնակությունը նորաբաց ծովափնյա 4 աստղանի հյուրանոցում, երկու անգամ սնունդով, ամեն օր էքսկուրսիաներ, երեկոյան պարահանդեսներ, հուշանվերներ:

Ուղեւորության արժեքը, ներառյալ ինքնաթիռի տոմսը, 950 դոլարի փոխարեն 550 դոլար է: Երեխաների համար նախատեսված են զեղչեր:

Տեղեկություններ համար դիմել «ԱԿՆ» տուրիստական ընկերություն Ղազար Փարպեցի 20, հեռ.՝ 531500, 52–29–10, 53–45–60:

ԹԵՔԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

Վարձով տրվող տարածքներ 130 քմ եւ 150 քմ մակերեսով, ապահովված հեռախոսով, տուրջորյա ջեռուցմամբ, հոսանքով եւ ջրամատակարարմամբ:

Թեքեյան կենտրոնն ունի նաեւ լավ կահավորված, տեխնիկապես սարքավորված 2 դահլիճ՝ մեծ եւ փոքր, նախատեսված ասուլիսների, ժողովների, սեմինարների, ցուցահանդեսների եւ նման միջոցառումների համար:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Երեւան, Խանջյան 50, Թեքեյան կենտրոն:

Հեռախոսներ՝ 573057, 576645, 572422

@rminco Global Telecommunications **Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:**

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Պատուէր 1376 Տպաքանակը՝ 3000 Ստորագրուած է տպագրութեան՝ 22. 01. 2001 Գինը՝ 100 դրամ